2025, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (687)

Էջմիածնի Տպագիր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հաղորդագրություն

Հոկտեմբերի 16-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Մայր Աթոռի կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսների և հայաստանյան թեմական առաջնորդների ժողով: Մասնավոր անդրադարձ կատարվեց հոկտեմբերի 15-ին Արագածոտնի թեմում ՀՀ իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված դատապարտելի գործողություններին: Այս կապակցությամբ եպիսկոպոսները հանդես եկան հայտարարությամբ:

Հայտարարություն

Լրդովմունքով տեղեկացանք, որ հոկտեմբերի 15-ին Արագածոտնի թեմում իրավապահ համակարգի ներկայացուցիչները թեմի առաջնորդի, հոգևոր սպասավորների և աշխարհական աշխատակիցների նկատմամբ իրականացրել են ապօրինի գործողություններ, որոնք ուղեկցվել են բացարձակապես չպատճառաբանված ու անհիմն խուզարկություններով, խաբեությամբ բերման ենթարկելու, բերման ենթարկված անձանց գտնվելու վայրերը ծածուկ պահելու, փաստաբանական աջակցություն ստանալու հնարավորությունից զրկելու հակաօրինական դեպքերով:

Այսօր արդեն հայտնի դարձավ, որ նույն ամոթալի ոճով կալանք է կիրառվել Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի և Տ. Գարեգին քահանա Արսենյանի նկատմամբ, կալանքի միջնորդություն է ներկայացվել թեմի գլխավոր հաշվապահի վերաբերյալ: Ակնհայտ է, որ իշխող քաղաքական ուժը շարունակում է լծված մնալ Հայոց Եկեղեցին կազմաքանդելու չարամիտ ծրագրի իրագործմանը՝ թիրախավորելով եկեղեցականներին և իշխանական լծակների չարաշահմամբ՝ բռնաճնշումներ ու վարկաբեկիչ գործողություններ իրականացնելով հոգևոր սպասավորների և Եկեղեցու աջակիցների նկատմամբ:

Հակաեկեղեցական ապօրինի այս գործողություններով անթաքույց ոտնահարվել և արհամարհվել են նաև հավատավոր մեր Ժողովրդի հոգևոր զգացումները, փակվել են եկեղեցիներ, չեղարկվել նախապես ծրագրված ծիսական արարողություններ, առանց քահանաների՝ կատարվել են հուղարկավորություններ:

Ցավալի այս իրավիճակի ողջ պատասխանատվությունը կրում են օրվա իշխանությունը և անձամբ երկրի վարչապետը, որ տևական ժամանակ ատելության խոսք ու անհանդուրժողականություն է տարածում Եկեղեցու և եկեղեցականների նկատմամբ, բացահայտ ոտնձգություններ կատարում Եկեղեցու դարավոր կարգերի հանդեպ: Ըստ այդմ էլ՝ այս ակնհայտ ոչ իրավական քրեական գործընթացների քաղաքական բնույթն ակնառու է դառնում, երբ դրանք անմիջապես հաջորդում են վարչապետի՝ Հայոց Եկեղեցին թիրախավորող հայտարարություններին:

Մեր կոչն է ՀՀ դատական և իրավապահ մարմիններին՝ գործել բացառապես օրենքի շրջանակներում և տուրք չտալ պաշտոնեական լիազորությունները չարաշահող պետական գործիչների կամայականություններին և խմբային շահերին: Պետական լծակները պետք է ծառայեն բացառապես ազգային անվտանգության, հանրային համերաշխության և բարօրության կարևորագույն նպատակներին և ոչ թե դառնալով հաշվեհարդարի գործիք՝ առաջ բերեն ներազգային թշնամանք ու պառակտում:

Հոգևոր մեր սպասավորներին և հավատավոր մեր ժողովրդին հորդորում ենք չընկրկել, ամուր մնալ հավատքի ու աղոթքի մեջ, չերկնչել վտանգներից ու սպառնալիքներից և ամենայն ջանք ի գործ դնել՝ ընդդեմ երկրում տեղ գտնող անարդարությունների և անօրինականությունների:

Թող Տերը ուժ և զորություն պարգևի ազատազրկված մեր եղբայրներին և զավակներին, անսասան պահի մեր երկիրն ու Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցին այսօր և միշտ: Ամեն:



Հայտարարություն

Այսօր՝ հոկտեմբերի 3-ին, դատարանը, շարունակելով ոտնահարել արդարադատության հիմնարար սկզբունքները, Գերաշնորհ Տ. Միքայել արք. Աջապահյանին դատապարտեց երկամյա ազատազրկման:

Ի սկզբանե ակնհայտ էր, որ Շիրակի թեմի առաջնորդի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն ունի քաղաքական դրդապատճառներ և իշխանությունների հակաեկեղեցական արշավի բացահայտ դրսևորումներից է:

Գերշ. Տ. Միքայել արք. Աջապահյանին ազատազրկելու վերաբերյալ անարդար դատավճիռը քաղաքական հաշվեհարդարի հերթական ապացույցն է, որը խոսքի և կրոնի ազատության, խտրականության արգելքի սկզբունքի կոպտագույն ոտնահարում է, ժողովրդավարական հասարակարգին նետված ուղիղ մարտահրավեր:

Խստորեն դատապարտելով աղաղակող ապօրինությունները՝ վերստին հաստատում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հետամուտ է լինելու իրավական՝ այդ թվում միջազգային գործիքակազմերի կիրառմանը՝ Գերաշնորհ Տ. Միքայել արք. Աջապահյանի արդար իրավունքները վերականգնելու համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հոկտեմբերի 4-ին **Հայ օգնության Ֆոնդի տնօրենների խորհրդի անդամներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) տնօրենների խորհրդի անդամներին ու բարերարներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի առաջնորդ, ՀՕՖ-ի նախագահ Գերաշնորհ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Պարսամյանի և ՀՕՖ-ի տնօրենների խորհրդի ատենապետ Ռանդի Սապահ-Գուլյանի:

Հանդիպմանը Մեսրոպ եպիսկոպոսը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց հյուրերին և հիմնադրամի ծավալած գործունեությունը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունը բերեց ներկաներին՝ բարձրորեն գնահատելով այն ազգաշահ առաքելությունը, որ ՀՕՖ-ը իրականացնում է հայրենիքում և սփյուռքում:

Հայոց Հովվապետը, անդրադարձ կատարելով հիմնադրամի ազգանվեր և եկեղեցանվեր գործունեությանը, նշեց որ հայրենիքի համար ծանր ու փոթորկալի ժամանակներում ՀՕՖ-ը իր կարելիություններն ի սպաս է դրել ազգի զավակների հոգածության համար և իր ավանդն է բերել երկրի կրթական, մշակութային, սոցիալական, առողջապահական ոլորտներում, ինչպես և Հայաստան-սփյուռք կապերի սերտացմանը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքը փոխանցեց նաև ՀՕՖ-ի առաքելությանը սատարող բարեկամներին ու բարերար հայորդիներին՝ ընդգծելով, որ նրանց ներդրումի և ազնիվ ծառայության շնորհիվ բարեզարդվում ու պայծառանում է եկեղեցական և ազգային կյանքը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը մտահոգությամբ անդրադարձավ հայ ժողովրդի առջև ծառացած ներքին ու արտաքին մարտահրավերներին՝ կարևորելով սփյուռքի ազգային կառույցների, ինչպես նաև ՀՕՖ-ի ջանքերը՝ ի նպաստ առկա խնդիրների հաղթահարման, հայրենիքի զորացման ու առաջընթացի:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը գնահատանքով ընդգծեց, որ հոգևոր դասի ու եկեղեցանվեր հայորդիների նախանձախնդրության ու նվիրումի շնորհիվ եկեղեցին անշեղորեն իրականացնում է իր առաքելությունը:

Հանդիպմանը Նորին Սրբությունը պատասխանեց նաև ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի գործունեությանը տարբեր ոլորտներում և ծրագրերին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերն օրհնի և զորավիգ լինի թեմական առաջնորդին, ՀՕՖ-ի անդամներին, բարեկամներին ու բարերարներին իրենց ազգօգուտ բոլոր նախաձեռնություններում:

Հոկտեմբերի 8-ին **ԱՀ պետական այրերին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի պետական այրերին և քաղաքական ուժերի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ Արցախի նախագահի պաշտոնակատար Աշոտ Դանիելյանի և Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ԱՀ պետական այրերին

➥ էջ 1

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Արցախի պետական այրերը քննարկեցին հայրենազրկված արցախցիների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը և արցախահայության իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր:

Այս առնչությամբ անդրադարձ կատարվեց նաև Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերին և արցախցիների հետ բնակության վայրերում տարվող հոգեխնամ աշխատանքներին: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայ Եկեղեցին այս ուղղությամբ շարունակելու է ջանքեր գործադրել:

Զրուցակիցները կարևորեցին միջազգային հարթակներում հետևողական քայլերի համատեղ ձեռնարկումը՝ ի խնդիր Արցախի ժողովրդի իրավունքների բարձրաձայնման, Ադրբեջանում պահվող պատանդառվածների և ռազմագերիների ազատ արձակման, անհետ կորածների հայտնաբերման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության: Վերջում Արցախի պետական այրերն իրենց որդիական երախտագիտությունն ու հավատարմությունը հայտնեցին Առաքելական Մայր Եկեղեցուն:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Դոմենիկո Գիրլանդայո. «Աշակերտների կոչումը», 1481 թ.

Քրիստոսի 72 աշակերտները

Քրիստոսի տասներկու առաքյալները հանրահայտ են, նրանց անունները սովորաբար բոլորիս ծանոթ են անգամ ենթագիտակցական մակարդակում, քանի որ նրանց մասին լսել ենք մանուկ հասակից, նրանց կերպարները հաճախ են պատկերվել շարժանկարներում և սրբապատկերներում: Բայց ավետարանական պատմությունը վկայում է նաև ուրիշ, համեմատաբար քիչ հիշատակվող, սակայն ավելի մեծ խմբի՝ յոթանասուն (կամ յոթանասուներկու) աշակերտների մասին, որոնց Հիսուսն ուղարկեց՝ երկու-երկու քարոզելու այն քաղաքներում և գյուղերում, ուր Ինքն էր գնալու: Ովքե՞ր էին նրանք, ինչո՞ւ 12-ը կոչվեցին առաքյալ, իսկ 72-ը՝ աշակերտ, ինչպիսի՞ն է նրանց հետնորդական կամ հաջորդականության շղթան աշխարհում և հատկապես Հայ Առաքելական Եկեղեցում:

Մեր այս հոդվածը նպատակ ունի ոչ միայն ներկայացնելու փաստերը և ավանդությունները, այլև տրամադրելու գործիքներ՝ այս թեմայի գիտական հետագա ուսումնասիրության համար:

Ովքե՞ր են 72-ը, և ո՞րն է նրանց առաքելությունը՝ ըստ Ղուկասի Ավետարանի Ժ գլխի

Ղուկասի Ավետարանի Ժ գլուխը մեր հետաքրքրության գլխավոր աղբյուրն է: Ղուկասը վկայում է. «Դրանից հետո Տերն ընտրեց ուրիշ յոթանասուներկու հոգու և նրանց Իրենից առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր Ինքն էր գնալու: Եվ նրանց ասում էր. «Հունձը շատ է, բայց մշակները՝ քիչ. ուրեմն հնձի Տիրոջն աղաչե՛ք, որ Իր հնձի համար մշակներ ուղարկի»» (Ղուկ. Ժ 1–2):

Ավետարանական այս հատվածն առաջին հայացքից կարող է նշանակել, որ մինչ Քրիստոս կգնար որևէ քաղաք կամ գյուղ՝ քարոզելու, Իրենից առաջ խումբ-խումբ ուղարկում էր ընտրված աշակերտներից, որ նրանք քարոզեն. կարծես ծանոթական բնույթ էր կրում նրանց՝ նախապես գնալը կամ հող նախապատրաստելու նպատակ: Այլ դիտարկմամբ՝ առաքյալներն այսպիսի հանձնարարություն կամ հրահանգ չունեին Քրիստոսից, ուստի հետևությունն այն է, որ քարոզելու համար պետք է ավելի պատրաստված և վստահություն ներշնչող անձինք ընտրվեին: Այո՛, երբ ուշադրություն դարձնենք Ղուկասի Ավետարանի նախորդ՝ Թ գլխին, ապա հենց սկզբում կտեսնենք, որ մինչ աշակերտների ընտրությունն ավետարանիչն արդեն ներկայացրել և պատմել էր 12-ի մասին Ե և Զ գլուխներում, իսկ աշակերտների ընտրությունից առաջ արդեն Թ գլխում խոսել հենց 12-ի առաքելության մասին. «Եվ Իր տասներկու աշակերտներին կանչեց, նրանց զորություն և իշխանություն տվեց բոլոր դևերի վրա և հիվանդություններ բժշկելու: Եվ նրանց ուղարկեց Աստծու արքայությունը քարոզելու, հիվանդներին բժշկելու: Եվ նրանց ասաց. «Ճանապարհի համար ոչինչ չվերցնեք, ո՛չ գավազան, ո՛չ մախաղ, ո՛չ հաց, ո՛չ արծաթ, ո՛չ էլ երկուական վերարկու ունեցեք: Ո՛ր տունը մտնեք, այնտե՛ղ մնացեք ու այնտեղի՛ց գնացեք: Իսկ ովքեր ձեզ չընդունեն, ի վկայություն նրանց դեմ՝ այդ քաղաքից դուրս գալիս ձեր ոտքերից փոշին թափ տվեք»: Եվ նրանք ելան. շրջում էին գյուղից գյուղ՝ ավետարանելով ու ամեն տեղ բժշկություններ անելով» (Ղուկ. Թ 1–6): Այնուամենայնիվ, այս առաքելությունն ինչքան էլ առաջ լիներ 72-ին տրված առաքելությունից, և ինչքան էլ նույնացվեն դրանք միմյանց հետ, միևնույն է՝ նրանք ունեն շատ կարևոր տարբերություններ, որոնցից նշանակալին այն է, որ Քրիստոս, 12-ին տալով գրեթե նույն առաքելությունը, ամեն դեպքում չուղարկեց այն վայրերը, որտեղ հետո Ինքը պիտի գնար՝ քարոզելու, չուղարկեց Իրենից առաջ 12-ին, այլ 72-ին, իսկ 12-ը գնացին ոչ թե Քրիստոսի, այլ իրենք իրենց համար հող նախապատրաստելու:

Այժմ անդրադառնանք 72-ին տրված առաքելությանը և համեմատենք այն 12-ին տրվածի հետ: Լավ մտապահելով վերը նշված առաքելության յուրաքանչյուր պատվիրան՝ ուղղված 12-ին, այժմ ուշադրություն դարձնենք հետևյալին. «Գնացե՛ք. ահա ես ձեզ ուղարկում եմ իբրև գառներ՝ գայլերի մեջ: Մի՛ վերցրեք ո՛չ քսակ, ո՛չ մախաղ, ո՛չ կոշիկ և ճանապարհին ոչ ոքի հետ զրույցի մի՛ բռնվեք: Ո՛ր տունն էլ մտնեք, նախ ասե՛ք. «Խաղաղությո՛ւն այս տանը»: Եվ եթե այնտեղ խաղաղասեր մարդ լինի, ձեր մաղթանքը նրան կհասնի, ապա թե ոչ, ձեզ կվերադառնա: Այդ տանը մնացեք, նրանց ունեցածից կերեք ու խմեք, որովհետև մշակն իր վարձին արժանի է: Տնից տուն մի՛ տեղափոխվեք: Եվ ո՛ր քաղաքը մտնեք, ու ձեզ ընդունեն, կերեք, ինչ որ ձեր առաջ դնեն: Եվ այնտեղ եղած հիվանդներին բժշկեք ու նրանց ասեք. «Աստծու արքայությունը մոտեցել է ձեզ»: Բայց եթե մտնեք մի քաղաք, որտեղ ձեզ չընդունեն, նրա հրապարակները դուրս գալով՝ ասեք. «Նույնիսկ ձեր քաղաքի փոշին, որ նստել է մեր ոտքերին, ձեզ վրա ենք թափ տալիս, բայց այս իմացեք, որ Աստծու արքայությունը մոտեցել է ձեզ»: Ասում եմ ձեզ, որ սոդոմացիների համար այն օրն ավելի հեշտ կլինի, քան այդ քաղաքի» (Ղուկ. Ժ 3–12):

Այս պատգամը Հիսուս տվեց 72-ին, որը 12-ին տրված առաքելության հետ համեմատելիս տեսնում ենք հատկանշական զգալի տարբերություններ, որոնք պարզ ընթերցողի համար գուցե և զանազանելի չլինեն:

Այսպիսով՝ Քրիստոս 12-ին հստակ պատվիրում է, որ նրանք գնան և քարոզեն Աստծո Արքայությունը, որից հետո միայն երկրորդաբար ասում, թե ինչ չվերցնեն իրենց հետ և ինչպես դրսևորեն իրենց այն քաղաքներում ու գյուղերում, ուր որ լինեն քարոզչության ընթացքում: Նույն դիտարկումը 72-ի պարագայում այլ է. Հիսուս նրանց նախ պատգամում է ինչ անել և ինչ չանել, և հետո միայն ասում, որ խոսեն Աստծո Արքայության մոտ լինելու մասին, բժշկումներ կատարեն կամ վատ ընդունելության պարագայում այդ վայրի՝ նույնիսկ ոտքի փոշին թափ տան: Ուստի, Ղուկասի Ավետարանի Թ և Ժ գլուխներն ամբողջությամբ ընդգծում են նաև նրանց առաքելության բնույթը՝ քարոզել Աստծո թագավորությունը, բժշկել հիվանդներին և աստվածային իշխանությամբ արտաքսել չար ոգիներին, սակայն տարբեր հերթականությամբ և շեշտադրմամբ:

Բ. 12-ի և 72-ի առաքելությունների արդյունքները

Շատ դիպուկ է ավետարանիչը նկարագրում 12-ի և 72-ի առաքելության ավարտը՝ վերադարձի հոգեկան ապրումներն ու Քրիստոսի պատասխանը: Երբ 12-ը վերադարձան, խոսեցին իրենց անուններից և իրենց անձերից, կարծես իրենցից էր այդ իշխանությունը. «Առաքյալները վերադարձան ու Հիսուսին պատմեցին, ինչ որ արել էին...» (Ղուկ. Թ 10): Անմիջապես այս դրվագին հետևեց հացի բազմացման դրվագը, որտեղ Քրիստոս առաքյալներին հրավիրեց հացը բազմացնելու՝ ասելով. «Դո՛ւք նրանց հաց տվեք» (Ղուկ. Թ 13): Երբ նրանք տրտնջացին, թե հաց ու ձուկ քիչ ունեն, և չմտածեցին անգամ հրաշքի մասին, չնայած որ եկել և պատմում էին իրենց կատարած հրաշքներից, Քրիստոս Ինքը, «վերցնելով հինգ հացն ու երկու ձուկը, դեպի երկինք նայեց, դրանք օրհնեց ու մասմաս արեց և աշակերտներին տվեց, որպեսզի ժողովրդի առաջ դնեն» (հմմտ. Ղուկ. Թ 16): Այս կերպ Քրիստոս ցույց տվեց 12-ին, որ ոչինչ են այն հրաշքները, որոնք կատարել են՝ չճանաչելով կամ չխոստովանելով նույն հրաշքների իշխանությունն ու զորությունը տվողին:

Ուշագրավ են 72-ի զգացմունքներն ու նկարագրական խոսքերը, երբ վերադարձան Քրիստոսի մոտ և ցանկացան պատմել իրենց կատարած հրաշքների մասին. «Եվ յոթանասուներկուսը վերադարձան ուրախությամբ՝ ասելով. «Տե՛ր, նույնիսկ դևերն են մեզ հնազանդվում Քո անունով»» (Ղուկ. Ժ 17): Այս խոսքը, որը 72-ի անունից ամբողջական՝ մեկ տպավորություն է թողնում, վկայում է այն մասին, որ նրանք ճանաչել էին իրենց տրված զորության և իշխանության Տիրոջը կամ ամենաքիչը հասկացել էին, որ կատարվածն ամենևին իրենց սրբությամբ կամ զորությամբ չէր, այլ Նրա, Ում անունով կատարվում էր որևէ հրաշք, ուստի և Նա էլ Տերն էր այդ զորության և իշխանության: Աշակերտների նման հայտարարությանը հաջորդում է Քրիստոսի բերկրանքը. «Նույն ժամին Հիսուսը Սուրբ Հոգով ցնծաց ու ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի...»: Եվ դառնալով դեպի աշակերտները՝ հատուկ նրանց ասաց. «Երանի այն աչքերին, որ տեսնում են այն, ինչ դուք եք տեսնում: Որովհետև ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ ու թագավորներ ցանկացան տեսնել այն, ինչ դուք եք տեսնում, բայց չտեսան, և լսել այն, ինչ դուք եք լսում, բայց չլսեցին»» (Ղուկ. Ժ 21–24):

Այսպիսով՝ ավետարանիչը կարծես ցանկացել է ցույց տալ, որ չնայած զուգահեռաբար ընթացող դրվագներում 72-ն ավելի արագ ճանաչեցին զորությունների Տիրոջն ու խոնարհությամբ ստանձնեցին իրենց հանձնակատարությունը, սակայն Քրիստոս 12-ին էր ընտրել՝ մինչև վերջ և ավելի բարդ առաքելություններով տանելու դեպի Իր հաղթական Հարությունն ու Գալիլիայի հանդիպումը, որտեղ միայն 11-ին (առանց Հուդայի) և հետագայում 12-րդը դարձած Մատաթիային տրվեց իրենց իրական և վերջնական ավետարանչությունը, ինչպես նաև բացահայտ ասվեց, թե ո՞ւմն են իշխանությունն ու զորությունը. «Հիսուսը մոտեցավ, խոսեց նրանց հետ ու ասաց. «Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա: Արդ գնացե՛ք, աշակե՛րտ դարձրեք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, սովորեցրե՛ք նրանց պահել այն ամենը, ինչ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին մինչև աշխարհի վախճանը»» (Մատթ. ԻԸ 18–20):

Գ. Յոթանասո՞ւն, թե՞ յոթանասուներկու

Նոր Կտակարանի բնագրագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ Ղուկասի Ավետարանի երկու հատվածները՝ «Դրանից հետո Տերն ընտրեց ուրիշ յոթանասուներկու հոգու...» (Ղուկ. Ժ 1) և «Եվ յոթանասուներկուսը վերադարձան...» (Ղուկ. Ժ 17), հստակ արձանագրում են աշակերտների քանակը, սակայն որոշ հին ձեռագրերում՝ կոդեքսներում ու պապիրուսներում, նշված են և՛ 70, և՛ 72 թվերը: Բանն այն է, որ դա բնագրագիտական խնդիր է և բխել է հնագույն ձեռագրերի տեղական կամ ընթերցողների մշակութային ավանդույթներից ու ընկալումներից: ➥ էջ 6, 8

Ճշմարտության քրիստոնեական ընկալումը

«Ի՞նչ է ճշմարտությունը» (Հովհ. 18:38). Հիսուսի և Պիղատոսի միջև խոսակցության ողջ ընթացքի բարձրակետն է այս հարցը, որ տալիս է Պիղատոսը: Հարցադրում, որն այդպես էլ Տերն անպատասխան է թողնում:

Պիղատոսը՝ որպես մարմնավորում այս աշխարհի կարգերի, օրենքների, տրամաբանության և հզորության, չի կարողանում կամ չի ցանկանում ըմբռնել Քրիստոսի այն խոսքը, թե *Ինքը ծնվել ու եկել է աշխարհ, որպեսզի ճշմարտության մասին վկայի* (Հովհ. 18:37): Լինելով այն օրերի քաղաքակիրթ աշխարհի՝ Հռոմեական կայսրության ներկայացուցիչ՝ նա հասկանում է, որ իր առջև կանգնած մարդն անմեղ է, սակայն ընդունված կարգերը, հասարակական ճնշումը և քաղաքական խարդավանքներից վախը նրան ստիպում են տեղի տալ և ի վերջո Քրիստոսին մատնել խաչելության:

Ի՞նչ կատարվեց Պիղատոսի դեպքում: Հստակորեն գիտակցելով ճշմարտությունը, որ Հիսուս անմեղ է, նա զիջեց այն: Ըստ իր պաշտոնից ենթադրվող տրամաբանության՝ «ճիշտ վարվեց», որովհետև հրեաները նրան սպառնում էին, որ եթե արձակի Հիսուսին, ուրեմն կայսերը բարեկամ չէ (Հովհ. 19:12): Այս խոսքերը վերջնականապես համոզեցին նրան, որ չարժե առավել բորբոքել իրավիճակը. միգուցե լուրը հասնի կայսերը, և ի՞նքը պատժի արժանանա: Պիղատոսը գերադասեց *հարաբերականորեն* «ճիշտ վարվել», քան ճշմարտությունը պաշտպանել:

Սակայն հոգևոր առումով ճշմարտությունը չի սահմանափակվում միայն իրավացիությամբ կամ արդարացիությամբ: Անշուշտ, այն ներառում է այդ իմաստները, բայց խորքային առումով՝ ճշմարտությունն ընդունել-չընդունելը աշխարհընկալման, նաև կենսակերպի հարց է:

Օժտված լինելով մտավոր սահմանափակ զորությամբ՝ մենք երբեք չենք կարող աշխարհի բոլոր հարցերի ճշմարիտ պատասխաններն ունենալ, չենք կարող մեր գոյության հիմքում ընկած հարցերին, որոնք առնչվում են մարդկային կյանքի իմաստին, աշխարհի ստեղծման պատճառներին, բանականության ծագմանը և այլն, տալ լիովին սպառիչ, բացառապես գիտական պատասխաններ: Իսկ այն հարցերը, որոնց պատասխանները մտքով ու փորձով հասանելի են, այնքան շատ են, որ գործնականորեն անհնար է մարդու համար մեկ կյանքի ընթացքում այդ ողջ գիտելիքի ձեռքբերումը: Սրա հետևանքով է, որ մարդ արարածներս սխալական ենք: Մենք միշտ ավելի շատ բան չգիտենք, քան գիտենք:

Սակայն մենք ունենք ընտրություն, ունենք հնարավորություն՝ ընդունելու *բացարձակ ճշմարտության* գոյությունը: Սա նշանակում է ընտրել՝ արդյոք մեր մտավոր սահմաններից այն կողմ, մեր մարդկային վերաբերմունքից անկախ, կա՞մ ճշմարտություն, թե՞ ոչ: Եթե ընդունում ենք, որ կա, ապա անհրաժեշտաբար պետք է հանգենք դրա վերմարդկային, քրիստոնեության դեպքում՝ աստվածային ծագմանը, որովհետև օբյեկտիվ ու բացարձակ չի կարող լինել այն ճշմարտությունը, որը տրված է մեզ նման մարդկանց կողմից, կամ որը մեր իսկ պայմանավորվածությունների արդյունքն է: Դրա վառ վկայություններն են բոլոր պետական օրենքները: Այո՛, դրանք օգտակար են, և առանց դրանց՝ անհնար է թվում վերակազմակերպել հասարակությանը, սակայն այդ օրենքները կատարյալ չեն ո՛չ իրենց բովանդակությամբ և ո՛չ էլ գործադրմամբ:

Այսինքն՝ մենք ստեղծված ենք Աստծո կողմից, Աստծո արարչագործած աշխարհում, որն ապրում է Նրա հաստատած օրենքներով: Սա վերաբերում է ցանկացած ճշմարտության. անգամ գիտության և մարդկային մտքի ճիգով հայտնաբերված ճշմարտությունները կենդանություն են առնում, սկզբունք են դառնում Աստծո կողմից և Աստծո միջոցով:

Կա նաև սրան հակառակ աշխարհայացքը: Այն պնդում է, որ ճշմարտությունը հարաբերական է, որ «ճշմարտությունները» շատ են և ոչ միակը: Եվ որ ճշմարտությունը ճշմարտություն է, եթե մարդիկ պայմանավորվում են, համաձայնում են այն համարել ճշմարտություն: Անշուշտ, այս ընկալման կողմնակիցները ևս քիչ չեն և իրենց ընկալումները հիմնավորում են այս կամ այն կերպ: Սակայն մեկ բան պարզ է. եթե ճշմարտությունը մեկից ավելի է, ապա այն արդեն ճշմարտություն չէ: Ստացվում է, որ, ի վերջո, ճշմարտություն գոյություն չունի:

Սակայն մեկ պահ եկեք մտածենք հետևյալի շուրջ. Հիսուս Քրիստոս Հովհաննեսի Ավետարանում Ինքն Իր մասին ասում է. «Ես եմ Ճանապարհը և *Ճշմարտությունը* և Կյանքը» (Հովհ. 14:6): Հիսուս Քրիստոս մարմնավորումն է ճշմարտության: Նա, լինելով կատարյալ Աստված, հնարավոր է դարձնում ցանկացած ճշմարտության գոյություն և լինելով կատարյալ Մարդ՝ մեր աչքի առջև ապրում է այդ ճշմարտությունը, ցույց է տալիս ամենաակնառու կերպով՝ սեփական կյանքի օրինակով: Քրիստոնյայի համար հետևել ճշմարտությանը նշանակում է.

- խոստովանել, որ ճշմարտությունը բացարձակ է և տրված է Աստծուց,
- հավատալ, որ Քրիստոս Ինքն է այդ ճշմարտությունը՝ մարմնացած և մարդացած,
- ապրել ճշմարտությունը, ձգտել Քրիստոսի կատարելությանը:

Միայն Աստծո հաստատած և Աստծո վկայած ճշմարտությունն է, որ բացարձակ է: Աստված է, որ մեզ տվել է, մեր մեջ դրել է խղճի, բարոյականության, տրամաբանելու ունակությունները: Եվ սա գործում է բնավ ոչ միայն քրիստոնյաների կամ աստվածապաշտ մարդկանց պարագայում: Անգամ Աստծո գոյությունը մերժողները, անգամ հեթանոս կուռքեր պաշտողները, երբ գործում են ոչ հարաբերական արժեքների հիման վրա, այլ անանց սկզբունքներով, խղճի համաձայն և մաքուր մտոք, նրանք գործում են Աստծո սահմանած ճշմարտության կանոններով: Նույնը կարող էր անել և Պիղատոսը, սակայն չարեց:

Ի վերջո, ո՞րն էր Պիղատոսի խնդիրը, նրա հարցի էությունը:

Պիղատոսն աշխարհի մտածողության և մարդկության առջև հառնող հարցերի ու երկվությունների խորհրդանիշն է: Ճշմարտության փնտրտուքը մարդկության պատմության ողջ ընթացքի անբաժանելի մասն է: Դարերով իմաստասերները խորհել, գրել, վիճել են ճշմարտության շուրջ: Շատերը ճշմարտությունը պայմանավորել են իդեալական հասարակարգով, շատերը՝ անհատական կատարելությամբ, ոմանք՝ աստվածայինով, իսկ ոմանք էլ իսպառ մերժել են ճշմարտության գոյությունը՝ համարելով այն մարդկային պայմանականություն, սեփական սահմանափակությունից փախուստի ձգտում: Սակայն Պիղատոսի օրինակը ցույց է տալիս, որ բավարար չէ ճշմարտության մասին հարցնելը. ճշմարտությունը հաճախ մեր առջև է՝ բաց, պարզ ու տեսանելի: Քրիստոս Ինքն է Ճշմարտությունը՝ *բացարձակ ու կենդանի մարմին ստացած: «Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, Իմ ձայնը լսում է»* (Հովհ. 18:37): Հետևաբար՝ հարցը մեզ պետք է տանք. իսկ մենք ճշմարտությունն ընդունելու պատրա՞ստ ենք, ճշմարտության ձայնը մենք լսո՞ւմ ենք, թե՞ այն խլանում է այս աշխարհի առաջացրած առաջին իսկ աղմուկից...

Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ
Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ

Կանանց օրհներգությունները Սուրբ Գրքում

Աննայի աղոթքը և Սամուել մարգարեի ծնունդը

«Աննան աղոթքի կանգնեց ու ասաց. «Սիրտս ամրացավ Տիրոջ շնորհիվ, իմ ուժն ավելացավ Տիրոջ շնորհիվ, բերանս լայն բացվեց իմ թշնամիների վրա, լցվեցի ուրախությամբ, քանի որ փրկեցիր ինձ»» (Ա Թագ. 2:1):

Աստվածաշնչյան կանանց հայտնի օրհներգությունները

Սուրբ Գրքում կանանց վերագրվող խոսքերը համեմատաբար փոքր ծավալ են կազմում: Այդուհանդերձ, Հին և Նոր Կտակարանները ներկայացնում են կարևոր մի քանի օրինակներ, որոնք պատկանում են աստվածաշնչյան հայտնի կանանց: Նման օրինակները լավագույնս արտահայտում են այդ կանանց՝ առ Աստված ունեցած խոր հավատքն ու երախտագիտությունը: Դրանք են՝ Դեբորայի երգը (Դատ. 5:1–31), Աննայի աղոթքը (Ա Թագ. 2:1–11) և Մարիամ Աստվածածնի օրհներգությունը (Ղուկ. 1:46–55):

Դեբորա մարգարեուհին Իսրայելի հզոր դատավորներից էր, և «....Իսրայելի որդիները նրա մոտ էին գնում դատերի համար» (Դատ. 4:5): Երբ Իսրայելի զորաբանակը պարտության մատնեց քանանացիների Հաբին թագավորի զորագլուխ Սիսարային, «....այդ օրը Դեբորան և Աբինեեմի որդի Բարակը օրհներգեցին....» (Դատ. 5:1): Վերջինս բնականաբար հաղթական ռազմերգ էր՝ լի կրոնական տարբեր զգացումներով: Աննայի աղոթքը և Մարիամի օրհներգությունը բավականին տարբերվում են Դեբորայի երգից, բայց և այնպես ունեն շատ ընդհանրություններ, ինչը թույլ է տվել որոշ ուսումնասիրողների կարծելու, որ Աննայի աղոթքը, ունենալով մարգարեական նախանշան, դարձել է նաև Մարիամի օրհներգության նախօրինակ:

Աննան աղոթքի է կանգնում Տիրոջ առաջ

Աննան (նշանակում է բարեհաճություն, շնորհ) Եղկանայի կինն էր, հետագայում՝ Սամուել մարգարեի մայրը: Եղկանան Ղևիի ցեղից էր և բնակվում էր Եփրեմի Նասիբում: Նա ուներ նաև երկրորդ կին, որի անունը Փեննանա էր (նշանակում է մարգարիտ), որը, ի տարբերություն Աննայի, ուներ զավակներ:

Ինչպես հին աշխարհի շատ այլ երկրներում, Իսրայելում ևս գերակշռող էր միամուսնությունը (մոնոգամիա): Թեպետ բազմակնությունը (պոլիգամիա) հակառակ չէր ո՛չ օրենքին և ո՛չ էլ բարոյականությանը, այդուհանդերձ, շատ դեպքերում տնտեսական առումով այն պարզապես անիրագործելի էր: Բազմակնության պատճառները տարբեր էին. առաջին կնոջ ամլություն, տղամարդկանց և կանանց թվի անհամապատասխանություն, մեծ աշխատուժի անհրաժեշտություն, ընտանիքի հեղինակությունն ու հարստությունը բազմակի ամուսնական կապերի միջոցով բարձրացնելու ցանկություն և ծննդաբերության ժամանակ կանանց մահացության բարձր մակարդակ:

Սուրբ Գրքում կանացի անպտղությունը շատ հաճախ համարվում էր Տիրոջ կողմից պատիժ. «Աննան տառապանքի և տրտմության մեջ էր, որովհետև Տերն իրեն զավակ չէր պարգևել: Հենց այդ պատճառով էր տրտմում, որ Տերը փակել էր իր արգանդը, որպեսզի զավակ չպարգևի իրեն» (Ա Թագ. 1:6): Եվ, իհարկե, հակառակ սրան, երեխաներ ունենալը համարվում էր Աստծուց տրված նվիրական պարգև. «Մարդու ժառանգությունը որդիներն են, որոնք իր վարձն են, և այն է պտուղն իր որովայնի» (Սաղմ. 126:3):

Միջագետքյան շատ աղոթքներ, ինչպես նաև հայտնաբերված մի շարք իրավական փաստաթղթեր ցույց են տալիս, որ նմանատիպ խնդիրներ գոյություն ունեին ամբողջ Հին Մերձավոր Արևելքում: Անպտղությունը, փաստորեն, ամուսնացած կնոջ համար մեծ ողբերգություն էր, քանի որ միայն ամուսնուց որդի ունենալով էր հնարավոր ապահովել նրա անվան հավերժացումը և մահից հետո նրա կարողության կարգավորված փոխանցումը: Նմանօրինակ պատկերի հանդիպում ենք նաև Ծննդոց գրքում՝ 11:30, 15:2–4, 16:1–2, 17:15–16, 21:1–2, 25:5. խոսքն այս պարագայում Աբրահամի և իր կնոջ՝ Սառայի մասին է: Ի սկզբանե Ռեբեկան և Ռաքելը նույնպես նկարագրվում են որպես ամուլ կանայք (Ծննդ. 25:21, 29:31), բայց հետագայում ունեցած նրանց զավակները կարևորագույն դերակատարում պիտի ստանձնեին Իսրայելի ողջ պատմության մեջ:

Եղկանան ամեն տարի իր քաղաք Արիմաթեմից գնում էր Սելով՝ Տիրոջը զոհ մատուցելու, և իր կին Փեննանային բաժիններ էր տալիս նրա որդիների ու դուստրերի թվով: Հայտնի է, որ Վկայության խորանը Գաղգաղայում մնալուց յոթ տարի անց տեղափոխվեց Սելով և այստեղ մնաց Դատավորների շրջանում մինչև Հեղի քահանայապետի օրերը: Եղկանան թեև Աննային ավելի էր սիրում, սակայն նրան տալիս էր մեկ բաժին, «քանի որ նա զավակ չուներ» (Ա Թագ. 1:5): Այս ամենի համար Փեննանան հաճախ էր ծաղրում Աննային, իսկ վերջինս այնքան էր տրտմում, որ լալիս էր և ոչինչ չէր ուտում: Այդպիսի դեպքերում Եղկանան փորձում էր մխիթարել նրան՝ ասելով. «Մի՞թե ես քեզ համար տասը զավակից լավը չեմ» (Ա Թագ. 1:8):

Հերթական անգամ Տիրոջը զոհ մատուցելուց հետո Աննան ելավ Սելով, աղոթքի կանգնեց Աստծո առաջ, դառնորեն լաց եղավ և ասաց. «Ադոնայի, Տեր, ելովե Սաբավոթ, եթե կամենաս տեսնել քո աղախնի տառապանքները, ինձ հիշես ու արու զավակ տաս քո աղախնին, մինչև նրա մահվան օրը քեզ կնվիրեմ նրան, նա գինի չի խմի ու չի հարբի, և նրա գլխին ածելի չի դիպչի» (Ա Թագ. 1:11): Խոսքն այստեղ նազորեական ուխտի մասին է, որին վերաբերող կանոնները ներկայացված են Թվեր 6-րդ գլխում: Համաձայն դրանց՝ այն անձը, որ ուխտ էր անում նվիրել իրեն Տիրոջը, մինչև ուխտի օրերի լրանալը՝ պետք է հրաժարվեր խաղողից պատրաստված որևէ տեսակի բանից՝ թե՛ խմիչք, թե՛ ուտելիք, իր ուխտի ողջ ընթացքում գլխին ածելի չպիտի դիպչեր, և պետք է հեռու մնար մահացածներից, քանի որ նրանց դիպչելու դեպքում պիտի համարվեր պղծված:

Տաճարի մուտքի մոտ նստած Հեղի քահանան հետևում էր Աննային, և քանի որ վերջինս մտքում էր աղոթում (եբրայերեն բնագրում «մտքում էր աղոթում»-ի փոխարեն գրված է՝ «խոսում էր իր սրտում»), Հեղին կարծեց, թե նա հարբած է, և խստորեն հանդիմանեց: Ի պատասխան՝ Աննան ասաց, որ ինքը գինի չի խմել և հարբած չէ, իսկ Տիրոջ առջև է կանգնել իր տրտմությունների պատճառով: Հեղին օրհնեց Աննային՝ մաղթելով, որ Աստված կատարի նրա հայցած բոլոր խնդրանքները:

Սամուելի ծնունդը և Աննայի օրհներգությունը

Առավոտ կանուխ՝ Տիրոջը երկրպագելուց հետո, Եղկանան ընտանիքի հետ վերադարձավ Արիմաթեմ և մերձեցավ իր կնոջը՝ Աննային: Վերջինս հղիացավ, ծնեց որդի և նրան անվանեց Սամուել՝ ասելով. «Տիրոջից՝ Զորությունների Աստծուց, խնդրեցի սրան» (Ա Թագ. 1:20): Սամուել անունը (եբր.՝ Շմուել) ունի երկու հիմնական իմաստ. 1) «Աստված է նրա անունը», 2) «Աստված լսեց»: Երբ Սամուելը կրծքից կտրվեց, ծնողները նրան տարան Սելով, քանի որ, ինչպես խոստացել էր Աննան, իրենից ծնված արու զավակին պետք է «նվիրեր» Տիրոջը: Մայրը մանկանը տարավ Հեղի քահանայի մոտ՝ ասելով. «....Տերը կատարեց Իրենից հայցած իմ խնդրանքը: Արդ, իբրև հատուցում, նրան նվիրում եմ Տիրոջը. ինչքան որ ապրի, թող ծառայի Տիրոջը» (Ա Թագ. 1:27): ➥ էջ 7

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Երբ միահյուսվում են բարեգործությունն ու արվեստը

Հարցազրույց բարերար Գրիգոր Մովսիսյանի և արվեստագետ Լևոն Լաճիկյանի հետ

— Պարո՛ն Մովսիսյան, վերջերս Դուք ժամանակակից հայ նկարիչ Լևոն Լաճիկյանի 12 գեղանկարները նվիրաբերեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ինչպե՞ս ծնվեց եկեղեցու թեմայով նկարներ պատվիրելու և դրանք Հայ Եկեղեցուն ընծայելու գաղափարը: Ո՞րն էր Ձեր գլխավոր նպատակը:

— Մեր Եկեղեցուն գեղանկարներ նվիրելու գաղափարը ծնվեց այն ժամանակ, երբ Վեհափառի գահակալության 10-ամյակին պատիվ ունեցա անձամբ ծանոթանալու Նորին Սրբության հետ: Մինչ հանդիպումը երկար մտածում էի՝ ինչ նվեր մատուցել այդ խորհրդանշական օրվա առիթով, և ակամայից միտք ծագեց ընծայել նկարիչ Մայիս Մխիթարյանի ստեղծագործություններից մեկը՝ Վեհափառի դիմանկարը: Վեհափառը շատ հավանեց նկարը, և այդ պահից ավանդույթ դարձավ յուրաքանչյուր տարի Եկեղեցուն հոգևոր թեմայով նոր նկար նվիրելը, և ամեն անգամ հանդիպում էինք Վեհափառի հետ՝ նոր նկարով ու նոր գաղափարով:

Հետագայում որոշեցի ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործություններից հավաքածու կազմել և նվիրաբերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այդ նախաձեռնությունը կյանքի կոչելու ճանապարհին կարևոր դեր ունեցավ նաև «Ռոսլին» մշակութային ամսագիրը, որի միջոցով ծանոթացա Լևոն Լաճիկյանի արվեստին: Շատ տպավորված լինելով Լաճիկյանի գեղագիտական մտածողությամբ և հոգևոր թեմաների յուրահատուկ մեկնաբանությամբ՝ որոշեցի նրան պատվիրել եկեղեցու 12 նկար: Նկարներն ստեղծվեցին մեկ տարվա ընթացքում, և երբ պատրաստ էին, Արագածոտնի թեմի և մեր ընտանիքի անունից ընծայաբերեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ Վեհափառ Հայրապետի ծննդյան առիթով:

Սա ոչ միայն նվիրատվության գաղափար էր, այլև մշակութային նախաձեռնության՝ ուղղված ժամանակակից հոգևոր արվեստի պահպանմանը:

— Վեհափառ Հայրապետի ծննդյան օրվա առիթով այդ նվիրատվությունը Ձեզ համար ի՞նչ խորհրդանշական իմաստ ուներ, որքանո՞վ էր այն սիրո և հավատարմության արտահայտություն Եկեղեցուն և մեր հոգևոր առաջնորդին:

— Ես Վեհափառ Հայրապետին համարում եմ մեր ժողովրդի մեծագույն զավակներից մեկը՝ ոչ միայն իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, այլև որպես բացառիկ անհատականություն: Այդ նվիրատվությունը, անշուշտ, սիրո, երախտագիտության, հարգանքի և հավատքի արտահայտություն էր մեր Եկեղեցուն և հոգևոր առաջնորդին: Միաժամանակ ցանկանում եմ նշել, որ նախաձեռնության կարևոր նպատակներից էր նաև, որ ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործությունները նույնպես արժանանան դրվատելի վերաբերմունքի, ինչպես անցյալի վարպետների գործերը: Կարծում եմ՝ արվեստագետներին պետք է սիրենք, փայփայենք և գնահատենք կենդանության օրոք: Իսկ եկեղեցին այն վայրն է, որտեղ հոգևոր արվեստը կարող է ոչ միայն պահպանվել, այլև նպաստել հավատքի և գեղեցկության միասնությանը: Աստծո ողորմությամբ՝ մտադիր ենք շարունակել այս ավանդույթը...

— Երբ առաջին անգամ տեսաք նկարները, ի՞նչ զգացումներ ունեցաք: Ձեր կարծիքով՝ այդ նկարներն ինչպիսի՞ ներգործություն կարող են ունենալ Մայր Աթոռ այցելողների հոգևոր կյանքի վրա:

— Երբ առաջին անգամ տեսա նկարները, շատ տպավորվեցի: Յուրաքանչյուր նկարի հետ ասես տեղափոխվեցի միջնադար՝ այն ժամանակաշրջանը, երբ կառուցվել է տվյալ եկեղեցին:

Լևոն Լաճիկյանի նկարչական արվեստը յուրահատուկ է, այն գծանկարի և գեղանկարի նուրբ համադրություն է, ուր գծային ճշգրտությունը ներդաշնակորեն միահյուսվում է գեղանկարի գունային և զգացական արտահայտչականությանը՝ ստեղծելով հուզական խորություն և հավերժության զգացողություն: Լաճիկյանը մեր եկեղեցիները, մեր ճարտարապետության գլուխգործոցները պատկերում է առանձնահատուկ նրբազգացությամբ՝ դրանց հաղորդելով խորհրդավոր և հոգևոր ջերմ ու առինքնող մթնոլորտ...

— Պարո՛ն Լաճիկյան, ի՞նչ զգացողություններ ունեցաք, երբ Ձեզ դիմեցին հայկական եկեղեցու գեղանկարներ ստեղծելու առաջարկով: Ի՞նչ ապրումներ էին ուղեկցում Ձեզ նկարելու ընթացքում: 12 նկարներից ո՞րն է Ձեզ համար ամենաթանկը և ինչո՞ւ:

— Նախ՝ աննկարագրելի էր այդ պահին ինձ համակած զգացողությունը, քանի որ առաջարկը լիովին համընկնում էր իմ ներքին ցանկությանն ու տրամադրվածությանը: Ապա՝ դիմողը երբևէ իմ ճանաչած ամենաբարեպաշտ հայորդիներից է՝ բազմաթիվ եկեղեցանվեր ծրագրերի հեղինակ Գրիգոր Մովսիսյանը: Ուստի միանգամից լծվեցի գործին: Շատ կարևոր է, որ պատվիրատուն ինձ վստահեց եկեղեցիների ընտրությունը: Սկզբում կազմեցի եկեղեցիների ցանկը, որն ընդգրկում է Էջմիածնի Մայր Տաճարը, Զվարթնոցի տաճարը և հիմնականում Հայ Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմի եկեղեցիները՝ Սաղմոսավանքը, Հովհաննավանքը, Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին և այլն: Հավելեմ, որ բոլոր 12 նկարներն էլ հավասարապես թանկ են ինձ համար, քանի որ յուրաքանչյուրը մի մարգարիտ է՝ ներդաշնակ շրջակա բնությանը:

— Պարո՛ն Մովսիսյան, ինչպես նշվեց, Դուք բազմիցս բարեգործություններ եք կատարել՝ ի նպաստ Հայ Եկեղեցու: Ձեր մեկենասությամբ վերակառուցվել են Արցախի Մեխակավանի Ձորավոր Սուրբ Աստվածածին և Աշտարակի Սուրբ Մարիանե եկեղեցիները: Ինչպե՞ս եք վերաբերվում Եկեղեցուն աջակցելու և ծառայելու գաղափարին, և ինչո՞վ է տարբերվում Եկեղեցուն զորակցելը մյուս բարեգործություններից:

— Ցավոք, բռնազավթվեց Արցախը, և Մեխակավանի Ձորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցին ադրբեջանցիները հողին հավասարեցրին: Տարիներ առաջ, այո՛, ստանձնեցինք նաև Աշտարակի Սուրբ Մարիանե կիսակառույց եկեղեցու վերաշինման գործը: 2020 թվականին տեղի ունեցավ եկեղեցու վերաօծման արարողությունը, որը շատ տպավորիչ էր: Պատիվ ունեցա խորան բարձրանալու և ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը, ինչպես նաև ինձ շնորհվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան:

Իսկ այն հարցին, թե ինչպես եմ վերաբերվում Եկեղեցուն ծառայելու և աջակցելու գաղափարին, ուզում եմ պատասխանել մեր ազգի հանրահայտ ասացվածքով՝ «Ամեն մարդ իր հացն ուտի, ամեն ոք իր գործին»: Ամեն ոք պետք է զբաղվի իր գործով, ինչպես ասում է Աստվածաշունչը՝ «Ամեն ոք իր հոգեւոր տաղանդներով ծառայեցնի միմեանց, որպես բարի տնտեսներ Աստուծոյ բազմաձեւ շնորհաց»: Ինձ համար ամենակարևորը ինքս ինձ հանդեպ հավատարիմ մնալն է, ինչպես նաև ինձ հանձնարարված գործերը կատարելն է: Ինձ համար ամենակարևորը ինքս ինձ հանդեպ հավատարիմ մնալն է, ինչպես նաև ինձ հանձնարարված գործերը կատարելն է:

Համաստեղը հայոց պետականության մասին

Ծննդյան 130-ամյակի առիթով

Գաղտնիք չէ, որ մարդկությունն այսօր էլ ապրում է ուժի թելադրած իրավունքով, և ցանկացած ժողովուրդ իր գոյության հեռանկարը կարող է տեսնել միայն իր պետության մեջ: 1931—1933 թթ. «Հայրենիք» ամսագրի էջերում մաս-մաս հրատարակված «Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպում Համաստեղը ներկայացնում է հայոց պետականության իր իդեալը: Հանգամանքների բերումով՝ Համաստեղը լավ էր պատկերացնում պետականության երկու՝ առաջին հայացքից հակադիր, բայց էությամբ հայության ազգային շահերից շատ հեռու, անգամ այդ շահերի դեմ գործող կառույցները՝ թուրքականն ու ամերիկյանը, որտեղ ապրել էր իր կյանքը:

Համաստեղի «Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպում համաձուլված են կորցրած բնօրրանի կարոտն ու անկախ, ազատ Հայաստան ունենալու երազանքը: Պատմական ճակատագրի բերումով՝ անկախ պետականություն ունենալը դարեր շարունակ երազանք է եղել հայության համար: Համաստեղը դյուցազնավեպում կերտել է ազգային ու մարդկային արժանապատվության համար աննահանջ կռվող ֆիդայիների, մարտաշունչ կանանց, հողից դժվարությամբ բաժանվող ու հարկադրաբար սար բարձրանալիս հետը սերմացու տանող գյուղացիների անմոռանալի կերպարների մի պատկերասրահ: Բոլորը դիմադրում, կռվում են հանուն ազատության, խաղաղ ապրելու և արարելու իրավունքի: Դա այն բռունցքված հզոր ուժն է, որի արժեքը գիտի նաև թշնամին. «300 ֆէտայի աւելի կ'արժեն, քան թրքական բանակ մը» (հտ. 1, էջ 399):

Համաստեղը համոզված է՝ «Վրէժը երբեք շինարար չէ. քանդող է», հայության երազած պետությունը պիտի կառուցվի «լաւ, գեղեցիկ հիմքերու վրայ», իսկ ամենակարևորը՝ հայ երեխան «բարիին եւ չարին պէս» պիտի իմանա «թուրքին եւ հային տարբերութիւնը» (հտ. 2, էջ 600):

Համաստեղը հայության ազգային նկարագիրը բնորոշելու համար օգտագործում է «կէս-հեթանոս, կէս-քրիստոնեայ» ձևակերպումը՝ աչքի առաջ ունենալով պապերից ժառանգած ուժն ու ոգին, որոնց համադրվում է քրիստոնեական անսահման մարդասիրությունը:

Դյուցազնավեպի գլխավոր հերոսներից դոկտոր Նայիրյանը, որի նախատիպը Նիկոլ Աղբալյանն է, լավ գիտի աշխարհում գործող սկզբունքը՝ «Ձա՛րկ, եւ իրաւունքը քուկդ է»: Դոկտոր Նայիրյանն ավելի հեռուն է տեսնում: Նա ընկերներին ասում է. «Պահենք այս ազնիւ ժողովուրդը վաղուան համար, որ ան կարենայ իր դերը կատարել մարդկային յառաջդիմութեան մէջ դէպի բարոյական կատարելութիւն: Մտքի զօր է, աղբէրս, մանաւանդ՝ մեզ համար պահանջել մարդկային եւ կամ քրիստոնէական բարոյականութիւն: Մարդկային մեծագոյն բարոյականութիւնը ուժ է ինքնին, եւ ուժը ուժով կարելի է լիակատար ընել» (հտ. 2, էջ 406):

«Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպում սարսափելի են այն տեսարանները, որտեղ պատկերված են թուրքերի պղծած ու կործանած հայկական եկեղեցիները, հայ հոգևորականների, կանանց ու երեխաների հետ թուրքավարի վարվելու բազմաթիվ դեպքեր: Բայց վեպում կա հայության գոյատևման հույս ու համոզմունք. լեռը բարձրացած գյուղացիներն առաջին իսկ օրերին ամենաապահով անկյունում դպրոց են ստեղծում, և որպես երկնային օրհնություն՝ կռվից վերադարձող ֆիդայիները լսում են երեխաների «Այբ-Բեն»-ը և «նոր աշխարհ եկող երախայի մը սուր ճիչը» (հտ. 1, էջ 336): Սա թուրք ավարառու տեսակի դեմ հայ արարող տեսակի անվերապահ հաղթանակի հաստատումն է:

Համաստեղ հայի ու գրողի ներքին անհաշտությունն աշխարհի հետ արտահայտում է դյուցազնավեպի գլխավոր հերոսը՝ Չերչի Կիրոսը, որի նախատիպը Հրայր Դժոխքն է: Նա եվրոպացի դիվանագետներին զարմացնում ու զայրացնում է կատարվածի իր մեկնաբանությամբ. «Երբ կը ջարդուէր հայ ժողովուրդը, ըսիք, որ Աստուած իր սիրելի զաւակներուն այդպէս է կամեցէր: Ըսէք նաեւ, որ թուրքերն են դարձեր Ալլահին սիրելին, եւ Ալլահը այդպէս կամեցեր է.... Չէ, մենք չենք ջարդէր, միայն կ'ուզենք, որ չի ջարդուինք» (հտ. 2, էջ 525):

Համաստեղը պատմական իրադարձությունների կողքին պարտավոր էր նաև հաշվի նստել հայ տեսակի անուղղելի ռոմանտիզմի հետ՝ պարբերաբար խաբված ու հայրենի տարածքներ կորցրած և կատարված ողբերգություններից դասեր չքաղող: Այսօր էլ այդպես է: Ապացույցը՝ Արցախի հայության հայրենազրկումը: Տնտեսական շահերն այսօր ջնջում են մարդու և ազգերի իրավունքները, մկրատում աշխարհի քաղաքական քարտեզը՝ հօգուտ ուժեղի: Մենք՝ հայերս, հերթական անգամ հայտնվեցինք գոյության ու չգոյության եզրագծին, որովհետև այսօր էլ չենք հասկացել երկու պարզ ճշմարտություն՝ օտարից հայությանը փրկություն չի եղել, չկա ու չի լինի, իսկ

աշխարհում՝ այս մի բուռ Հայաստանում են միայն պահպանվել արարման աստվածային ոգին, առանց որի՝ մարդու գոյությունը կենդանականի սահմաններում է:

Ամերիկյան իրականության մեջ համեմատաբար ազատ ապրելու և գործելու հնարավորություն կա բոլորի համար, բայց այս ամենը կատարվում է ոչ թե ազգային ինքնատիպությունը պետականորեն հովանավորելու, խրախուսելու միջոցներով ու հնարավորություններով, այլ յուրատեսակ համահարթեցմամբ՝ պետություն բոլորի համար, երբ առաջնայինը քաղաքացիությունն է: Գաղտնիք չէ՝ տասնամյակներ շարունակ աշխարհում շրջում է առասպելն այս հարուստ և ազատ երկրի մասին. այս հեքիաթի հետևից գնում էին ու գնում են նաև հայ երիտասարդները՝ օգտագործելով ամեն հնարավոր ու անհնար միջոց:



Լ. Լաճիկյանի «Սաղմոսավանք», «Մուղնու Ս. Գևորգ», «Ս. Մարիանե» գեղանկարները

Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությամբ, որտեղ ամեն ինչ, կարծում եմ, արդեն ասված է.

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս,
Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս,
Իր գաւիթովն հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նաւ մ' է ծփուն…
Եկեղեցին Հայկական ես աչքս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
Իր խորանէն մխացող քուլայ-քուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխռով…
Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատքին
Իմ պապերուս, որ հողէն զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ…
Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ' է բանուած,
Որուն ետեւ՝ սկիհին մէջ, կիջնէ Իւնքը՝ Աստուած,
Որուն առջև՝ ծնրադիր կու գայ իմ ազգս ամբողջ
Հաղորդուիլ անցեալին հաց ու գինւով կենսառողջ.....

— Պարո՛ն Լաճիկյան, մինչ օրս հանրային տիրույթում ի՞նչ դրսևորումներ են ունեցել հայոց եկեղեցիները պատկերող Ձեր գծանկարներն ու գեղանկարները:

— Անչափ ուրախ եմ, որ իմ եկեղեցանկարներն անարձագանք չեն մնացել և հաճախ են շրջանառվում որպես բացիկներ, նամականիշներ, տետրեր, նոթատետրեր, սեղանի ու պատի օրացույցներ: Դրանք տպագրվել և տպագրվում են թե՛ հայրենիքում, թե՛ արտերկրում: Ցանկանում եմ առանձնացնել «Հայկական եկեղեցիներ» բացիկաշարը, որը 2018 թվականին ԱՊՀ երկրների «Գրքարվեստ» միջազգային մրցույթում արժանացավ մրցանակի: Հպարտ եմ նաև, որ ինձ վստահվեց անցյալ տարվա սեպտեմբերին տեղի ունեցած Էջմիածնի Մայր Տաճարի վերաօծման և Մյուռոնօրհնեքի արարողության տարբերանշանի ստեղծումը:

— Պարո՛ն Մովսիսյան, Ձեզ համար բարեգործությունն ի՞նչ է՝ պա՞րտք, կոչո՞ւմ, թե՞ սրտի բնական արձագանք: Ի՞նչ նշանակություն ունի բարեգործությունը Ձեր կյանքում:

— Այդ հարցին ցանկանում եմ պատասխանել՝ օգտվելով Ավետարանում հիշատակված Բարի սամարացու, քանքարների առակներից և Տիրոջ՝ «Տվեք, որ տրվի Ձեզ» պատգամից: Բարի սամարացու առակը մեզ պատգամում է Տիրոջ հիմնական պատվիրաններից մեկը՝ «Սիրիր ընկերոջդ քո անձի պես»:

Տերն ասում է. «Տվեք', որ տրվի ձեզ»: Երբ տալիս ես, քո սահմանափակ պահոցից գնում է համամարդկային, համազգային պահոց, և դրանով այն ավելի է քոնը դառնում: Եթե Տերը շնորհ է տվել, պետք է այն ծառայեցնել՝ ի նպաստ հասարակությանը, իսկ եթե մեր աշխատածն ագահորեն ծառայեցնենք միայն մեր կարիքներին, անտեսենք մեզ տրված շնորհը, կնմանվենք քանքարների առակում հիշատակված ծառային, որը թաքցրեց իր քանքարը հողի մեջ և արժանացավ տիրոջ բարկությանը:

— Պարո՛ն Լաճիկյան, ի՞նչ ազդեցություն ունեցավ բարերարի հետ համագործակցությունը Ձեր ստեղծագործական կյանքում:

— Պետք է նշեմ, որ եթե չլիներ բարերար Գրիգոր Մովսիսյանը, չէին ծնվի այդ գեղարվեստական ստեղծագործությունները: Այս օրինակը, հուսամ, վարակիչ կլինի նաև այլ բարերարների համար, որոնք ունեն հնարավորություն, սակայն չունեն բավարար իմաստնություն...

— Պարո՛ն Մովսիսյան, ըստ Ձեզ՝ ի՞նչ պարտավորություն ունի յուրաքանչյուր քրիստոնյա Եկեղեցու հանդեպ: Ո՞րն է Ձեր պատգամը նրանց, ովքեր ունեն հնարավորություն՝ զորակցելու Եկեղեցուն, բայց դեռ երկմտում են:

— Եկեղեցին մեզ համար ծնողի առաքելություն ունի, և Եկեղեցու կողքին չլինելը կնշանակի, որ մարդն իր ընտանիքի կողքին չէ: Վստահ եմ, եթե յուրաքանչյուրն իր գործով կարողանա մի փոքր լույս բերել Հայ Եկեղեցի, մշակույթի ու հավատքի դաշտ, ապա մեր ժողովուրդը միշտ կունենա հոգևոր ամուր հիմք և գեղագիտական զգացողություն...

Հարցազրույցը՝ Անի ՆԱԶԱՐՅԱՆԻ

Սրան 19-րդ դարավերջին և 20-րդի սկզբին շատ էին նպաստում բազմաթիվ՝ հատկապես բողոքական քարոզիչներ, որոնք Հայաստանյայց Եկեղեցու դավանանքից տարբերվող տեսությունները տարածելուն զուգահեռ դառնում էին նաև Նոր աշխարհի յուրատեսակ դեսպաններ:

Համաստեղն ամերիկյան միջավայրից ստեղծագործական ազդակներ շատ քիչ էր ստանում, թեմատիկ ու ժանրային որոնումներն ավելի շատ դեպի Արևելք էին տանում, դեպի կորցրած բնօրրան, քան թե Արևմուտք, բայց «Քրիստոսի երկրորդ գալուստը» դրամատիկական ծավալուն պատկերը, «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրաման ու մի քանի պատմվածքներ լրացնում են պակասը:

Ամերիկյան պետական կառույցը կարող է հայոց պետության համար հիմք ծառայել միայն այն դեպքում, երբ համակարգային առավելություններն ու արտոնությունները համադրվեն հայության համազգային մեծ նպատակներին ու երազանքին: Սոսկ նյութական բարիքների առատությունը չի կարող լրացնել հոգևոր կյանքի պահանջմունքները: Ուրեմն՝ հայոց պետությունը պիտի հոգա ոչ միայն իր քաղաքացիների նյութական, այլ նաև հոգևոր կարիքները և նպաստի ազգային ձգտումների իրագործմանը, Աստծու պատկերով ստեղծված մարդու կերպարի պահպանմանը: Տեխնիկական ու տեխնոլոգիական բազմաթիվ հեղափոխություններ փոխել ու բարելավել են մարդու կեցության պայմանները, բայց ուշադիր հայացքը տեսնում է հոգևոր դաշտում անդարձ կորցրածը:

Խորհրդային Հայաստանի՝ հայության մեծ հայրենիքի մի պատառիկի գոյությունը, հակառակ քաղաքական ու կուսակցական հակասությունների, Համաստեղի համար հայության ապագայի հույսն ու ամուր կռվանն էր: Խորհրդային երկրի մասին Համաստեղի պատկերացումները կարող էին անմիջական կենսափորձով լրացվել, եթե Համաստեղի՝ 1926-ին Հայաստան մեկնելու ծրագիրն իրագործվեր, բայց ընկերները պարզապես արգելեցին նրան վտանգել կյանքը:

Համաստեղը ՀՅԴ-ի այն բացառիկ անդամներից էր, որ երբեք ոչ մի քննադատական խոսք չուղղեց Խորհրդային Հայաստանին. աշխարհի քաղաքական քարտեզի վրա դա միակ երկիրն էր՝ հայի ու հայության անունով. «Հայ ժողովուրդը որբի մը պէս դաժան խորթ մօր մը յանձնուած էր: Այդ *խորհրդայինն* էր, որ կիրք ու նախապաշարում ստեղծեց Սփիւռքի եւ մանաւանդ՝ Դաշնակցութեան դէմ.... Միշտ ալ ուզած եմ չափ մը պահել իմ մտածումներուն եւ հաւատքին մէջ: Կուսակցական կիրք ունեցած չեմ: Եթէ կայ բան մը, որ իր մէջ չափ չունի, ան ալ *Հայկականութիւնն* է, եւ ես կը հաւատամ, որ Հայաստանի մէջ ինչքան ուժեղանայ *Հայկականութիւնը*, այնքան հետզհետէ մաշումի կ'ենթարկուի սա օտար խորհրդայինը»,— գրել է Համաստեղը Գ. Մահարուն ուղղված նամակում (Համաստեղ. Նամակների, կազմող և ծանոթագրող՝ Մ. Խաչատրյան, Երևան, 2003, էջ 239):

Համաշխարհային երկրորդ պատերազմը շուտով վերածվեց Հայրենական մեծ պատերազմի, ու Համաստեղը չթաքցրած տագնապով էր ապրում 1418 օրերը, սարսափում 1915-ի կրկնությունից հայ հողի վրա:

Խորհրդային երկրի մասին լուրեր Համաստեղն ստացավ մտերիմ ընկերոջ՝ մանկավարժ, ՀՅԴ-ի գործուն անդամ Հակոբ Խաշմանյանի՝ 1964-ի աշնանը Խորհրդային Հայաստան կատարած ուղևորությունից հետո: Հակոբ Խաշմանյանը տեսավ այն անջրպետը, որ գոյացել էր հայաստանաբնակ ու սփյուռքի հայության միջև: Նա ամեն ինչ արեց այդ անջրպետը լցնելու համար՝ կազմակերպելով Համաստեղի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյանները համատիեզերական մասշտաբով, ինչպես կատակում էր Սիմոն Վրացյանը: Համաստեղը կյանքի վերջին տարիներին գրած «Առաջին սէր» ինքնակենսագրական վիպակում գլխավոր հերոսի՝ Վահրամի օրինակով աշխարհասփյուռ հայությանը հորդորում էր գնալ Հայաստան ու միանալ հայրենիք կառուցող հայորդիներին:

Համաստեղին ծանոթ պետական կառույցներն ստեղծվել ու գործել են ոչ թե աստվածային, այլ մարդկանց հորինած օրենքներով, որոնք իդեալական լինելուց շատ հեռու են: Գաղտնիք չէ, որ մարդկային օրենքներն աստվածային ճշմարտության սոսկ ստվերներն են: Այսպես՝ թուրքական պետությունը ցայսօր անզիղջ համառությամբ հերքում է իր՝ մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանության կազմակերպիչն ու իրագործողը լինելու փաստը: Անժխտելի է, որ արդեն նախորդ դարերում ԱՄՆ-ի տարածքում բնիկների բնաջնջման ծրագիր էր իրագործվել, իսկ ժողովուրդների բարեկամություն քարոզող խորհրդային կարգերի պայմաններում կամայականորեն, որպես օրենք, ի վնաս բնիկների՝ փոփոխվում էին հինավուրց ազգերի ու նորահայտ ցեղերի բնօրրանները: Սա ակնհայտ անարդարություն էր, որի հետևանքները դեռ երկար տասնամյակներ կխանգարեն ազգերի պատմական զարգացման հեռանկարներին և կպղտորեն մարդկության կյանքը:

Համաստեղը «Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպում իր երազած պետությունը պատկերում է Հայաստանի առաջին հանրապետության պատկերով, որը միայն պատմական իրականության արձանագրումը չէ, այլև խաղաղ ու ազատ ապրելու հայության դարավոր երազանքի առարկայացումը: Հեռավոր 1952-ին, երբ Համաստեղը հապճեպ խմբագրում ու ամփոփում էր դյուցազնավեպը՝ մի կողմ թողնելով երրորդ հատոր գրելու նախկին ծրագիրը, հույս ուներ, որ հաջորդ տասնամյակներում պատմության անիվը վերջնականորեն կշրջվի դեպի արդարություն, այնինչ անցած 70 և ավելի տարիների ընթացքում մարդկությունը միայն պատերազմել է, այսօր էլ պատերազմում է՝ շարունակելով խոնարհվել սոսկ բիրտ ուժի առաջ:

Մեր օրերում ևս բացառապես կարևորվում է ազգային երազանք ունենալու և դրան հետամուտ լինելու հնարավորությունը, մի բան, որ հեքիաթի է նման, սակայն պատմական փորձն ապացուցում է՝ հաճախ հեքիաթը դառնում է իրականություն: Ապացույց՝ 1918-ի մայիսի 28-ը: Սա Համաստեղի համոզումն է: Անվերապահորեն հավելեմ՝ 1991-ի Սեպտեմբերի 21-ը: Համաստեղն իր դյուցազնավեպով հայության առջև լայնորեն բացում է երազանքից մինչև իրականություն տանող աստեղային ճանապարհը:

Համաստեղը, դժբախտաբար, չտեսավ հայրենիքի մի պատառիկ հողի վրա ստեղծված հայկական պետականության իրական պատկերը, չքայլեց Արարատի շուքի տակ փռված երկրում, չընդբոշխնեց ամեն քայլափոխի հայերեն խոսք լսելու բացառիկ երջանկությունը: Նա համոզված էր, որ հայոց պետության՝ «դաշնակցական» կամ «խորհրդային» ածականները ժամանակավոր են, և հեռու չէ ազատ, անկախ Հայաստանի համազգային երազանքի իրականացումը:

Ուրիշ հարց, որ հայությունը դժվար թե կարողանա մեր երկրում կառուցված պետական համակարգը ներկայացնել որպես Համաստեղ հայի ու գրողի երազած Հայաստանի պատկեր: Ավելին՝ այսօր կդժվարանանք անգամ համեմատության եզրեր գտնել հայության՝ դարերով երազածի ու մեր ձեռքերով, անմիտ ընտրություններով, անհող ու անհայրենիք աղանդավորների միջոցով ստեղծված իրավիճակի միջև:

Մարգարիտա ԽԱՉԱՏՐՅԱՆ, բ. գ. դ.

Քրիստոսի 72 աշակերտները

↩ էջ 2

Հնագույն ժամանակներում՝ դեռևս Մովսիսական ժամանակաշրջանից սկսած, 70 թիվը պարունակել է և՛ խորհրդանշական, և՛ օրենսդրական իմաստներ, որոնք որոշ պարագաներում հասել են 72-ի:

Այստեղ կարևոր է նշել, որ թվային այս տարբերությունը չի փոխում ղուկասյան պատմության էությունը: Այն շարունակում է ցույց տալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խոսքի և ապա բուն քրիստոնեության քարոզիչների և քարոզչությունը կրողների իրավահաջորդականության կամ մեծ շղթայի կապն այսօրվա քրիստոնյա եկեղեցիների, նրանց հոգևորականների և եկեղեցական պատկանելությունն իրենց վրա ունեցող հավատացյալների միջև:

Դ. 70/72-ի խորհրդանշական բնույթը հին հրեական համատեքստում

Հին Կտակարանի մեջ 70 թիվը հաճախ ամբողջականության, թագավորական ու ժողովական խորհրդանիշ է: Մեջբերենք մի գեղեցիկ և դիպուկ օրինակ. «Իսրայելի ծերերի միջից Ինձ համար հավաքիր յոթանասուն հոգի, որոնց դու ճանաչում ես որպես ժողովրդի ծերերի և գլխավորների: Նրանց վերցրու բեր ժողովի վրան, և նրանք այնտեղ թող կանգնեն քեզ հետ: Ես կիջնեմ այնտեղ, կխոսեմ քեզ հետ և քեզ վրա եղած հոգուց կառնեմ ու կդնեմ նրանց վրա, որպեսզի նրանք քեզ հետ միասին կրեն ժողովրդի բեռը, և դու միայնակ չկրես դա» (Թվեր ԺԱ 16—17): Վերոնշյալ հատվածում Աստված Մովսեսին պատվիրում է հավաքել յոթանասուն ավագների, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի ժողովրդի ղեկավար: Այս պատմությունն ամենից վառ օրինակն է 70 թվի ժողովական, առաջնորդական խորհրդանիշի: Երբ կարդանք Ծննդոց Ժ գլուխն ամբողջությամբ, կտեսնենք, որ սկզբից մինչև վերջ թվարկվում են Նոյի որդիների և նրանց որդիների ու թոռների անունները՝ պարունակելով ավանդաբար կոչվող «յոթանասուն ազգերի» գաղափարը:

Ավելին՝ հունարեն Սեպտուագինտան (Յոթանասնից թարգմանությունը), ըստ ավանդության, թարգմանել են 70 կամ 72 հրեա թարգմանիչներ Ալեքսանդրիայում, ինչն ինքնին կապ է ստեղծում 70/72 թվի և երրորդ-երկրորդ դարի գեղարվեստական-մշակութային խորհրդանիշների ու ընկալումների միջև:

Ե. Տասներկու առաքյալների կարևորության ընդգծումը

Տասներկու առաքյալների ընտրությունը ներկայացված է Ավետարաններում: Մատթեոսի Ավետարանի Ժ գլխի 2—4 համարներում տեղադրված է նաև նրանց անվանացանկը, օրինակ՝ Սիմոն (Պետրոս), Անդրեաս, Հակոբոս, Հովհաննես և այլն: Նման անվանացանկի առկայությունն Աստվածաշնչի կանոնիկ գրքերում նախևառաջ անձանց, այս պարագայում «առաքյալների» լինելության և ապա առանցքային դերի ստանձնման որոշակի փաստաթուղթ է: Մյուս տեսանկյունից, յոթանասուներկուսի անվանացանկի բացակայությունը չի ենթադրում նրանց չգոյությունը, քանի որ նույն տրամաբանությամբ հիշյալ հատվածում, երբ Մովսես մարգարեն պետք է հավաքեր յոթանասուն ծերերի և ժողովրդի ավագների, կրկին չի շեշտադրվում որևէ մեկի անունը: Վերջինիս պարագայում շեշտադրումը մեկ անձի շուրջ է՝ Մովսեսի, ուստի նույն տրամաբանությամբ ոչ պակաս կարևոր են յոթանասուներկու աշակերտների առկայությունն ու հետհամբարձումյան գործունեությունը, սակայն չպետք է անտեսել, որ քարոզչական և առաքելական գործունեության անվանական շեշտադրում ստացան հայտնի և գրի առնված տասներկու առաքյալները, որոնցից տասներկուերորդը՝ Մատաթիան, լրացրեց Հուդայի տեղը: Ի վերջո հենց տասներկուսն ունեցան հետևյալ առանձնահատկություններն այնպես, ինչպես Մովսեսն էր տվել Ահարոնին՝ լինել ընտրված և հատուկ իշխանությամբ օժտված. «Ութերորդ օրը Մովսեսը կանչեց Ահարոնին, նրա որդիներին և Իսրայելի ծերերին» (Ղևտ. Թ 1), «Հիսուսն Իր մոտ կանչեց տասներկու աշակերտներին, նրանց իշխանություն տվեց պիղծ ոգիներ հանելու և բոլոր ցավերն ու հիվանդությունները բուժելու» (Մատթ. Ժ 1): Սակայն եթե Մովսեսի պարագայում իշխանության փոխանցումը Մովսեսից չէր, այլ Աստծուց, ապա Հիսուս հենց Ինքն Իր աստվածային իշխանությամբ օժտեց առաքյալներին՝ լինելու Եկեղեցու հիմնադրմանը նպաստող և հիմք հանդիսացող անձինք՝ իբրև հիմնաքարեր՝ «...առաքյալների ու մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունաքարը Քրիստոսն է. Նրա մեջ ամբողջ կառույցը ներդաշնակորեն միավորված աճում է, որպեսզի Տիրոջով սուրբ տաճար դառնա...» (Եփես. Բ 20—21):

Զ. «Առաքյալ», թե՞ «աշակերտ». բառերի եզրագիտությունը և գործառութային տարբերությունը

«Առաքյալ» բառի հունարեն համարժեքը (ἀπόστολος — ապոստոլոս) բառացի նշանակում է «ուղարկված»: Այսպիսով՝ առաքյալն այս համատեքստում տիտղոս է, պատվանուն, որի կրողն ունի լիազորություն և հանձնարարություն ինչ-որ մեկի՝ այս դեպքում Հիսուս Քրիստոսի անունից: Մինչդեռ «աշակերտ» (μαθητής — մաթետես) նշանակում է «սովորող, հետևող, ուսանող», և նման անձը տեսականորեն դեռևս պիտի ստանա և ոչ թե բաշխի: Այս երկու հասկացությունների միջև տարբերությունը հետևյալն է. բոլոր առաքյալները միաժամանակ աշակերտներ են, բայց ոչ բոլոր աշակերտներն ունեն առաքյալի կարգավիճակ, քանի որ առաքյալությունը ենթադրում է ուղարկում և լիազորություն:

Է. Ինչո՞ւ 12-ը կոչվեցին առաքյալ, իսկ 70/72-ը՝ աշակերտ

Հարցին, թե ինչո՞ւ 12-ը կոչվեցին առաքյալ, իսկ 70/72-ը՝ աշակերտ, իբրև պատասխան՝ ստորև կնշենք մի քանի օրինակ.

1. Քրիստոսից տրված իշխանությունն ու լիազորությունը՝ քարոզելու և բժշկելու, ընդունված և ճանաչված էին երկկողմանի՝ և՛ տվողի, և՛ ստանձնողի կողմից: Հենց այսպիսի հիմքով էին հետագայում վավերացվում Քրիստոսի Եկեղեցու վավերականությունն ու մինչ օրս գործող եկեղեցականների առաքելահաջորդականությունը: Տասներկուսն



Կառլ Բլոխ. «Լեռան քարոզ», 1877 թ.

ստացել են հաստատուն հեղինակություն, դրա համար հետագա եկեղեցական ավանդություններում պահպանվել է իրավասության փոխանցման նախօրինակը՝ իբրև եկեղեցական իշխանության որոշիչ նմուշ: 70/72-ը՝ գործողության առումով որպես քարոզիչներ և նախապատրաստողներ, չեն ներկայացվում եկեղեցական կառույցի հիմնադիրներ:

Ուստի, տասներկուսը ոչ միայն անձինք, այլև ամբողջական, միաձույլ թիմ է, որում ընդգրկվածները հետագայում դարձան եկեղեցու հիմնական առաջնորդները: Յոթանասուն/յոթանասուներկուսն ավելի լայն, տարածքային ու միաժամանակ ժամանակավոր միսիոներական առաքելություն ունի՝ տարածքային համայնքներում քարոզելու և Եկեղեցու տարածք ստեղծելու դեր:

2. Տասներկուսի առաքելությունը կրում էր կենտրոնացված, «քաղաքապետային» դեր՝ նախատեսված եկեղեցական կառավարման ու սրբագրության համար, մինչդեռ 70/72-ի պարագան այլ է՝ գործել որպես լայնածավալ միսիոներների խումբ՝ գյուղական և միջքաղաքային տարածքներում նախօրոք քարոզելու համար: Նրանք կարծես հանձնառություն ունեին քարոզելու մի բան, որը պետք է գային և իրենցից հետո հիմնովին քարոզեին՝ նախ Ինքը՝ Քրիստոս, և ապա առաքյալներն ու նրանց հաջորդները: ➥ էջ 8

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օգոստինոս Երանելին և փոքրիկ տղան

Մի անգամ Կաթոլիկ Եկեղեցու մեծ վարդապետը (354—430), խորհրդածելով Ամենասուրբ Երրորդության խորին խորհուրդի շուրջ, ծովափին զբոսնելիս արտասովոր բան է նկատում: Մի փոքրիկ տղա ջանասիրաբար փորձում էր ծովի ջուրը փոքրիկ խեցիով դատարկել իր իսկ ձեռքով փորած փոսի մեջ: Զարմացած եպիսկոպոսը մոտենում է երեխային և հետաքրքրվում նրա՝ այդ տարօրինակ զբաղմունքով: Տղան, առանց վարանելու, պատասխանում է. «Ցանկանում եմ ամբողջ ծովը դատարկել այս փոսիկի մեջ»: Օգոստինոսը ժպիտը դեմքին սկսում է երեխային բացատրել, որ դա անհնար է, քանի որ ծովը չափազանց մեծ է՝ այդ փոսիկի մեջ ամփոփվելու համար:

Բայց եպիսկոպոսի հետ համաձայնելու փոխարեն՝ տղան հարցին հարց է տալիս. «Իսկ դու ինչպե՞ս ես քո այդ խելքով փորձում ընդգրկել տերունական անընդգրկելի խորին խորհուրդը»: Այս խոսքերով էլ երեխան խորհրդավոր կերպով անհետանում է՝ շփոթության մատնված աստվածաբանին մեն-մենակ թողնելով յուր մտքերի հետ:

Հնամենի եկեղեցական ավանդության համաձայն՝ դա մանկան կերպարանքով մի հրեշտակ էր՝ աստվածային նախախնամությամբ մեծ աստվածաբանին խոնարհության դաս տալու եկած: Այդուհետ Օգոստինոսը միշտ պիտի հիշի մարդկային մտքի սահմանափակության մասին, իսկ հոգևոր խորհուրդներն ընդունի հավատով, ոչ թե բացառապես բանականությամբ փորձի հասկանալ: Սա քրիստոնեական ավանդության ցայտուն դասերից է, երբ հասարակ օրինակներով կամ իրավիճակներով խորիմաստ աստվածաբանական ճշմարտությունների դասեր են տրվում, ինչպես և ընդգծվում աստվածային իմաստության առաջ խոնարհ կեցվածք ընդունելու անհրաժեշտությունը:

Սուրբ Վիկենտիոսի ջուրը կամ լռություն պահպանելու հրաշքը

Մի անգամ Սուրբ Վիկենտիոսի մոտ մի կին է գալիս՝ փնթփնթան և կռվազան ամուսնուց գանգատվելու, որի հետ այդպես ապրելն արդեն միանգամայն անհնարին էր դարձել նրա համար:

— Ես քեզ մի հրաշագործ միջոց կտամ,— ասաց սուրբը:— Գնա՛ մեր վանքն ու ջրհորից մի քիչ ջուր վերցրո՛ւ: Հենց որ ամուսինդ տուն վերադառնա և սկսի կռվել, մի կում ջո՛ւր առ բերանդ ու շուրթերդ կի՛պ սեղմիր այնպես, որ այդ ջրից և ոչ մի կաթիլ դուրս չհոսի: Ա՛յ կտեսնես՝ շուտով ձեր տանը խաղաղություն կհաստատվի:

Այդ կինը հենց այդպես էլ արեց: Հենց որ ամուսինը երեկոյան անտրամադիր տուն դարձավ և սկսեց կռվել, կինը նետվեց կախարդական ջրով լի բաժակին, մի կում ջուր հավաքեց բերանում և շուրթերը խուփ պահեց:

Իսկապես, ամուսինը շուտով լռեց: Այս անգամ ընտանեկան փոթորիկը զարմանալիորեն արագ հանդարտվեց: Կինը մեկ անգամ չէ, որ դիմեց այդ միջոցին, ինչն ամեն անգամ անխափան էր գործում: Իսկ որոշ ժամանակ անց ամուսինը փոխվեց: Նա առաջվա պես քաղցր ու քնքուշ դարձավ կնոջ նկատմամբ, խոսում էր սիրուց, բայց մանավանդ՝ գովում նրա հեզությունն ու համբերատարությունը:

Երջանիկ կինը եկավ սրբի մոտ.

— Այս ի՞նչ հրաշք է, ի՞նչ հրաշք,— բացականչում էր կինը:

— Այդ ջուրը, որ ես քեզ տվեցի վանքի ջրհորից, բնավ էլ հրաշագործ չէ,— պատասխանեց Սուրբ Վիկենտիոսը:— Հրաշքը քո լռությունը գործեց: Առաջ դու քո պատասխաններով ամուսնուդ կատաղությունն էիր հարուցում, այնինչ լռությունդ խաղաղեցնում էր նրան:

Սույն պատմությունն Իսպանիայում ցայսօր լայն տարածում գտած ասացվածքի պատճառ դարձավ՝ «Սուրբ Վիկենտիոսի ջրից խմի՛ր» որպես մեղմասրտության, խոսքին խոսքով չպատասխանելու, վիրավորանքին՝ վիրավորանքով, հակառակությունից, վիճաբանությունից, կռվի բռնվելուց խուսափելու կոչ և, առհասարակ, բախումնային իրավիճակի լավագույն լուծումը լռությունն ու զսպվածությունը համարելու խրատ:

Անկասկած, այս խրատը սուրբը տվել է լեզվական մեղքերի և դրանց ավերիչ ներգործությունների մասին սուրբգրային ուսուցմամբ. «Այնպես էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում: Ահա թե մի փոքր կրակ ինչպիսի՛ անտառներ է հրդեհում.... Գազանների, թռչունների և սողունների ամեն տեսակ, և ինչ որ կա ծովի մեջ, հնազանդված է և հնազանդվում է մարդկային բնությանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին և մահաբեր թույնով լցվածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել» (Հակ. 3. 5,7):

Իսկ սուտը, բամբասանքը, չարախոսությունը, քսությունը, զրպարտությունը՝ պարզամտությամբ կամ դիտավորությամբ ու թշնամաբար տարածված, կարող են պառակտել ողջ հասարակությանը, տակնուվրա անել հասարակական անդորրը, քաղաքացիական պատերազմներ հրահրել: Բնավ պատահական չէ, որ Սիրաքի գրքում գրված է. «Մի երրորդ մարդու լեզուն շատերին սասանեց, նրանց ազգից ազգ հալածեց, ամուր քաղաքներ կործանեց և մեծամեծների տներն ավերեց.... Ով նրան լսի, հանգիստ չի գտնի և վստահ ու ապահով չի ապրի: Մտրակի հարվածը վերք է առաջացնում, իսկ լեզվի հարվածը՝ ոսկորներ փշրում: Շատերն են ընկել սուսերի սայրից, բայց ոչ նրանց չափ, ովքեր ընկել են լեզվի երեսից» (Սիրաք 28.16—18, 20—22): Իսկ Դավիթ մարգարեն Աստծուց խնդրում է. «Պահապա՛ն դիր, Տե՛ր, իմ բերանին և ամուր դուռ՝ իմ շրթներին, որ սիրտս չհակվի չարության խոսքին՝ մեղքի պատճառ դառնալով անօրենություն գործող մարդկանց նման. ես նրանց հաճելի բաներին չեմ հաղորդակցվի» (Սաղմ. 140. 3—4):

Ուշագրավ պատմական մի փաստ. Մահաթմա Գանդին՝ Հնդկաստանի՝ Մեծ Բրիտանիայից անկախության ղեկավարներից և գաղափարախոսներից մեծագույնը, իր մոտ միշտ պահել է երեք փոքրիկ իմաստուն կապիկների արձանիկներ՝ մեկը ձեռքերով աչքերը փակած, մյուսը՝ բերանը, իսկ վերջինը՝ ականջները՝ որպես խաղաղության և հանդուրժողականության խորհրդանիշ, այսինքն՝ մերժում են չարը տեսնել, լսել և չարից խոսել:

Սուրբ Վիկենտիոսը (1350—1419) սերում էր Վալենսիա քաղաքում հաստատված հին ազնվական ընտանիքից, իսկ 18 տարեկանում արդեն միաբանել էր Դոմինիկյան ուխտին: Գլխավորել է Վալենսիայի աստվածաբանական դպրոցը, իսկ կյանքի վերջին շրջանում դարձել շրջիկ քարոզիչ: Քարոզել և դարձի է բերել բազմաթիվ մարդկանց, բայց հատկապես եռանդուն գործունեություն է ծավալել աղանդավորների՝ կատարների և վալդենսների միջավայրում: Իր խոսքով և գործով խոր հետք է թողել Կաթոլիկ Եկեղեցում: Սրբդասվել է 1455 թ.:

Ռուսերենից թարգմանությունը և մեկնությունը՝ Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

Կանանց օրհներգությունները Սուրբ Գրքում

↩ էջ 3

Մանուկ Սամուելին Տիրոջն ընծայաբերելուց հետո Աննան կրկին աղոթքի կանգնեց:

Ա Թագ. 2-րդ գլխում զետեղված այս աղոթքը, որ հաճախ կոչվում է նաև երգ կամ օրհներգություն, Աստծուն շնորհակալ լինելու, Նրան փառաբանելու մասին է և հնչում է Աննայի շուրթերից այն բանից հետո, երբ Տերը պատասխանեց նրա ջերմեռանդ աղոթքին և զավակ պարգևեց:

Աղոթքն ունի աստվածաբանական թեմաների հարուստ ընդգրկում՝ այդ թվում աստվածային գերիշխանություն, արդարադատություն և մարդկային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների անսպասելի շրջադարձ: Որոշ ուսումնասիրողների ենթադրությամբ՝ այն պարզապես թագավորական հաղթերգ է, որն ստեղծվել է Սելովում Իսրայելի՝ թշնամու նկատմամբ տարած մի հաղթանակից հետո: Գիտնականների գերակշիռ մասը, սակայն, այս աղոթքը վերագրում է Աննային, որն այս խոսքերով իր երախտագիտությունն է հայտնում Աստծուն և «տոնում իր հաղթանակը» Փեննաննայի նկատմամբ:

Աղոթքն սկսվում է անձնական փորձառության նկարագրությամբ: Աննան իր ուրախությունն է հայտնում Տիրոջը, որ լսեց իր աղոթքը, վերացրեց վշտի աղբյուրը և իրեն արու զավակ պարգևեց: Աննան, սակայն, ոչ միայն ուրախ էր զավակ ունենալու, այլև Տիրոջ կողմից իրեն օրհնված զգալու համար.

«Սիրտս ամրացավ Տիրոջ շնորհիվ, իմ ուժն ավելացավ Տիրոջ շնորհիվ, բերանս լայն բացվեց իմ թշնամիների վրա, լցվեցի ուրախությամբ, քանի որ փրկեցիր ինձ: Տիրոջ նման այլ սուրբ չկա, ոչ էլ արդար՝ մեր Աստծու նման, և քեզանից բացի՝ սուրբ չկա» (1–2):

Հաջորդիվ Աննան խոսում է Տիրոջ ամենազորության մասին, որը տարածվում է ողջ մարդկության վրա, և որ ամենաէականն է, Աննայի պարագայում Տերն ամուլներին կարող է զավակ պարգևել և դրան հակառակ՝ փակել բազմածին կնոջ արգանդը: Աննան զգուշացնում է հպարտության և ամբարտավանության մեղքի մասին՝ ընդգծելով, որ Աստված գիտության Աստված է և տեսնում է բոլորիս մեղքերը: Նա խոսում է մարդկային կյանքում տեղի ունեցող այնպիսի շրջադարձերի մասին, որոնց հեղինակությունը պատկանում է միայն Աստծուն.

«Մի՛ պարծենաք ու մի՛ խոսեք ամբարտավանությամբ, մեծախոսություն թող չլսվի ձեր բերանից, քանի որ Տերը Աստվածն է, որ գիտի ամեն ինչ, Աստվածը, որ նախապատրաստում է Իր գործերը: Հզորների աղեղները տկարացան, իսկ տկարները զորություն ստացան: Հացով կշտացածները զգացին նրա պակասը, իսկ քաղցածները բնակվեցին երկրում, ամուլը յոթ որդի ծնեց, իսկ բազմածինը դադարեց որդի ունենալուց» (3–5):

Աղոթքը շարունակում է ընդգծել Աստծո ամենազորությունը՝ շրջադարձային կերպով կյանքը մահվան փոխելը, մահը՝ կյանքի, աղքատությունը՝ հարստության, և հակառակը: Աննան ընդունում է այդ ամենազորությունը, որն ի վիճակի է բարձրացնելու կրիքավորներին աղբանոցից և նստեցնելու նրանց իշխանների հետ.

«Տերն է սպանում և ապրեցնում, գերեզման իջեցնում և հարություն տալիս: Տերն է աղքատացնում ու հարստացնում, ստորացնում ու բարձրացնում» (6–7):

Հետաքրքրական է, որ այս հատվածում խոսվում է հարության մասին: Կիրառված է «գերեզման» (եբր.՝ «շեոլ») բառը, որով սովորաբար կոչում էին մեռյալների թագավորությունը: Բառն իր հիմքում ունի եբր. «շեէլա» արմատը, որ նշանակում է «հարց»: Հրեա մեկնիչների բացատրությամբ՝ սա մի վայր է, որտեղ կան միայն հարցեր, և չկան պատասխաններ:

Նմանօրինակ հատվածի հանդիպում ենք նաև Մովսեսի օրհներգության մեջ. *«....Ես եմ սպանում և ես եմ փրկում, ես եմ հարվածում և ես եմ բժշկում: Չկա մեկը, որ կարողանա փրկել իմ ձեռքից»* (Բ Օրենք 32:39):

Հաջորդ՝ 2:8 համարը գրեթե նույնական է Սաղմոս 112:7–8 հատվածի հետ.

«Գետնից բարձրացնում է տնանկին, աղքատին հանում աղբանոցից, որ նրանց նստեցնի ժողովրդի իշխանների հետ ու փառքի գահին բազմեցնի նրանց» (2:8):

«Աղքատներին բարձրացնում է գետնից և տառապյալներին հանում աղբանոցից: Իր ժողովրդի իշխանների կողքին իշխաններ է կարգում նրանց» (Սաղմ. 112:7–8):

Այստեղ ևս շարունակվում են Աստծո ամենազորության և մարդկային կյանքն անսպասելիորեն փոփոխել կարողանալու գաղափարները, որոնցով արտահայտվում է Աստծո՝ այս աշխարհի վրա ունեցած բացարձակ իշխանության և տիրապետության միտքը:

Աղոթքի վերջին տողերը հաստատում են Աստծո հարատև պաշտպանությունն Իրեն հավատարիմներին և Նրա դատաստանը՝ չարի նկատմամբ: Աննան մարգարեաբար խոսում է գալիք թագավորի մասին, որն օծվելու և բարձրացվելու է Տիրոջ կողմից.

«Տերը տկարացնում է Իր հակառակորդներին: Տերը սուրբ է: Ո՛չ իմաստունը թող պարծենա իր իմաստությամբ, ո՛չ հզորն իր զորությամբ, ո՛չ էլ մեծատունն իր հարստությամբ: Պարծեցողը պետք է պարծենա նրանով, որ իմանում ու ճանաչում է Տիրոջը և երկրում իրավունք և արդարություն է գործադրում: Տերը երկինք ելավ ու որոտաց. Նա է, որ արդար լինելով, դատելու է երկրի չորս ծագերը: Մեր թագավորներին զորություն է տալու և զորավիգ է լինելու Իր օծյալին» (2:10):

Հին Մերձավոր Արևելքում, հատկապես մարտադաշտում, որոտն ու կայծակը համարվում էին աստվածությունների մշտական ուղեկիցները: Շումերական և խեթական առասպելներում, ինչպես նաև աքքադական և ուգարիթական դիցաբանությունում, աստվածները հարվածում են իրենց թշնամիներին որոտով ու կայծակով: Գրական այս թեման առկա է նաև Հին Կտակարանում:

Թագավորների և օծյալի մասին հիշատակումը ևս հետաքրքրական է, քանի որ այս ժամանակահատվածում դեռևս հաստատված չէր Իսրայելի թագավորությունը: Իսրայելացիները, սակայն, նկատում էին այլ ազգերի շրջանում թագավորական իշխանության գոյությունը և քաջ գիտակցում դրա կարևորությունը: Ի վերջո նրանք ևս ձգտում են ունենալ թագավոր, ինչի արձագանքը հետագայում կտեսնենք Ա Թագ. 8-րդ գլխում. *«Հավաքվեցին Իսրայելի բոլոր այրերը, եկան Սամուելի մոտ՝ Արիմաթեմ, և ասացին նրան. «Ահա դու ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ, մեզ վրա մի թագավո՛ր կարգիր, որ մեզ դատի, ինչպես բոլոր ազգերի մոտ է»»* (Ա Թագ. 8:4–5):

Աննայի աղոթքը փաստորեն կանխատեսում է Իսրայելում միապետության հաստատումը և մեսիայի՝ օծյալ թագավորի գալուստը: Այն հրեական պոեզիայի գլուխգործոցներից է և բնութագրվում է իր զուգահեռականությամբ, վառ պատկերավորմամբ և անհատական ու ընդհանրական հավատքի խոր զգացումով: Դա աղոթք է, պաշտամունքի օրինակ, որ ցույց է տալիս, թե ինչպես են Աստծուն հավատարիմ լինելու անձնական փորձառություններն արժանանում Տիրոջ կողմից տրված հստակ «պատասխանների»: Աննայի աղոթքում ամբողջությամբ արտահայտված է մարդկային կյանքի ողջ իմաստը՝ մեկ ընդհանուր պատգամի տեսքով, որը կրկին բացահայտվում է ընթերցողին՝ այս անգամ արդեն սրտաբուխ աղոթքի տեսքով:

Այս ամենից հետո մանուկ Սամուելին թողնելով Սելովում՝ Տիրոջ առջև, նրա ծնողները վերադարձան Արիմաթեմ. «Մանուկ Սամուելը Հեղի քահանայի մոտ Տիրոջն էր ծառայում» (Ա Թագ. 2:11): Նա հետագայում պիտի դառնար Իսրայելի մեծագույն մարգարեներից մեկը:

Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Աստվածատուր Ա Համադանցի՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Մահվան 300-րդ տարելիցի առիթով

Ալեքսանդր Ա Ջուղայեցի Կաթողիկոսի (1706–1714) մահվանից հետո Հայոց հայրապետական գահին բազմում է Աստվածատուր Ա Համադանցին: Նրա մասին, նախքան կաթողիկոս դառնալը, տեղեկությունները խիստ սակավ են: Ծնվել է Պարսկաստանի Համադան քաղաքում, կրթությունն ստացել է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքում՝ աշակերտելով Մովսես վարդապետ Ջուղայեցուն: Մինչև կաթողիկոս ընտրվելը եղել է Սուրբ Ամենափրկիչ վանքի միաբան եպիսկոպոսներից մեկը: Ալեքսանդր Հայրապետի վախճանից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Մովսես Ջուղայեցու հանձնարարականով, Աստվածատուր Համադանցուն ընտրել է հաջորդ կաթողիկոս:

Նորընտիր Հայրապետը Սուրբ Էջմիածին եկավ 1715 թ. մայիսի 7-ին և հաջորդ օրը՝ Կարմիր կիրակի, օծվեց Ամենայն Հայոց 107-րդ Կաթողիկոս: Սիմեոն Ա Երևանցին, բարձր գնահատելով Աստվածատուր Հայրապետի նվիրումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շենացման ու պայծառացման գործում, գրում է. «Սա էր այր հեզաբարոյ և հոգելի, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և արտասուեղ, որ ի նստիլն արար զբազում բարերարութիւնս Սրբոյ Աթոռոյս և երկիրս, կրեաց և զբազում նեղութիւնս և զտառապանս» (*Սիմեոն Երևանցի,* Ջամբռ, Երևան, 2022, էջ 71):

Աստվածատուր Կաթողիկոսի գահակալության տարիները համընկնում են տարածաշրջանային բարդ զարգացումների և Արևելյան Հայաստանում քաղաքական բուռն իրադարձությունների հետ: Նա իմաստուն և զգուշավոր կերպով իր մասնակցությունն է բերել 1720-ական թթ. հայ ազատագրական պայքարի գործին: Համագործակցել է հայ ազատագրական շարժման գործիչների հետ, հետամուտ եղել Ռուսաստանի օգնությամբ պարսկական տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրության գաղափարի իրականացմանը: Կաթողիկոսական օծումից շուրջ մեկ տարի անց՝ 1716 թվականին, հանդիպում է հայ զինված ապստամբությունը նախապատրաստող գործիչներից մեկի՝ Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ: Թեև կողմ էր Հայաստանի ազատագրության գաղափարին, սակայն մերժել է հախուռն ու անկազմակերպ ելույթները, վարել զգույշ և շրջահայաց քաղաքականություն՝ փորձելով Մայր Աթոռը հնարավորինս զերծ պահել թշնամիների ոտնձգություններից:

Սակայն ինչքան էլ փորձեին գաղտնի պահել նրա օժանդակությունը, այն չէր կարող աննկատ մնալ թշնամիների հետախույզ հայացքից: Պարսիկները խիստ կասկածներ ունեին կաթողիկոսի նկատմամբ՝ համոզված լինելով, որ Ռուսաստանի հետ գաղտնի հարաբերության մեջ է: Նրանց ձեռքն ընկավ Աստվածատուր Կաթողիկոսի նամակը՝ ուղղված Սյունիքի և Աղվանքի հայ գնդերին: Ի վերջո Հայրապետը բանտարկվեց, և երկար ջանքերից հետո 4000 ոսկու դիմաց նրան ազատ արձակեցին:

Սակայն Աստվածատուր Ա Համադանցին շարունակում էր աներեր մնալ և քաջալերել հայոց ազատագրական շարժումը (տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 3285):

Օսմանցիների համար ևս կաթողիկոսը վստահելի չէր: 1605 թվականից ի վեր Արարատյան դաշտում ոտք չդրած օսմանյան բանակը 1724 թ. հայտնվեց այստեղ: Տիրող վիճակն ավելի ծանրացավ, երեք ամիս տևած պաշարումից հետո գրավեցին Երևանի բերդը, և օսմանյան ռազմավարչական իշխանությունը հաստատվեց ամբողջ Արարատյան երկրում՝ այդ թվում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. «....ասով աւելի ևս վտանգուեցաւ Աստուածատուրի դիրքը.... միշտ երերեալ և տատանեալ կացութեան մէջ, ստէպ խուսափելով Մայր Աթոռէն, տիրապետողներու կեղեքումներէն ազատելու համար, և մերթ հոն հանդիպելով անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու համար» (Ազգապատում, հտ. Բ, սիւնակ 3286):

Այս շրջադարձային փոփոխությունը նոր և չափազանց բարդ խնդիրների առաջ կանգնեցրեց Սուրբ Էջմիածնին: Փլուզվել էին Էջմիածնի տնտեսական կարողությունները, խզվել էին կապերն արևելահայության ֆինանսական մայրաքաղաք Ջուղայի և առհասարակ Պարսկաստանի, ինչպես նաև Գանձասարի, Տաթևի, Գանձակի, Շամախիի և այլ կարևոր կենտրոնների հետ (Արմեն Այվազյան, Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական պայքարի քառուղիներում, Երևան, 2003, էջ 28–29): Աստվածատուր Կաթողիկոսն այս շրջանում ջանում էր վաստակել օսմանցիների վստահությունը՝ անշուշտ նպատակ ունենալով Մայր Աթոռի և նվաճված տարածքների հայության շահերի պաշպանությունը:

Չնայած երկրում տիրող ծանր վիճակին՝ Աստվածատուր Կաթողիկոսն զբաղվում է Մայր Տաճարի շինարարական աշխատանքներով՝ ուշադրություն դարձնելով ներքին հարդարանքին: Նրա նախաձեռնած նորոգության մասին արձանագրություն կա Մայր Տաճարի գմբեթատակ բոլորակին. «Ես՝ Տէր Աստուածատուր Համադանցի Կաթուղիկոս Ամենից Հայոց, ետու նորոգել զչորեսին խախտեալ սիւնք Սուրբ Եկեղեցւոյս և զբոլոր եկեղեցիս նորոգել և ծաղկել հանդերձ մարմարոնեայ շինուածովք» (Արսեն Հարությունյան, Վաղարշապատ, վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 64): Համաձայն այս արձանագրության՝ նորոգվել են Տաճարի կենտրոնական չորս մեծ սյուները, որոնք խախտված վիճակում էին գտնվում: Նրա օրոք մարմարե քարով կառուցվել են նաև Միածնի Իջման տեղը, Ավագ խորանի ճակատային մասը, սալարկվել հատակը, ինչպես նաև սպիտակեցվել Տաճարի պատերն ու առաստաղը. «....Սեղանոյն արար մարմարիոնեայ, սպիտակացոյց բռամբ և ծաղկեաց զբոլոր Տաճարս ի միջոյ կողմանէ» (Ջամբռ, էջ 71):

Հայրապետի նախաձեռնությամբ 1720 թ. սկսվել են Մայր Տաճարի որմնանկարազարդման աշխատանքները, որոնք իրականացրել են Նաղաշ Հովնաթանը և նրա ժառանգորդները: Հովնաթանյան ընտանիքի ներկայացուցիչները շուրջ 70 տարի, որոշակի պարբերականությամբ, հրավերով հետագա կաթողիկոսների՝ Մայր Տաճարում որմնանկարել են: Դժբախտաբար, ժամանակի ընթացքում, տևական խոնավության ու պատերի ծեփի քայքայման պատճառով որմնանկարները եղծվել են և մեծապես վնասվել (տե՛ս Սուրբ Էջմիածին. Քրիստոնեական աշխարհի առաջին տաճարը, Ս. Էջմիածին, 2024, էջ 16):

Աստվածատուր Կաթողիկոսի շինարարական աշխատանքների թվին է պատկանում նաև Մայր Աթոռի տնտեսատան գրեթե հիմնովին կառուցումը: Համաձայն Սիմեոն Երևանցու հիշատակության՝ տնտեսատան մեջ նաև ջրհոր է բացում (տե՛ս Ջամբռ, էջ 71): ➥ էջ 8

Քրիստոսի 72 աշակերտները

➥ էջ 2, 6

Մեծ է դերը աշակերտների, քանի որ ճշմարտության համար հող նախապատրաստելն ամբողջ քարոզչության կարևորագույն մասն է, ինչպես Քրիստոսի գալստյանը նախորդած Հովհաննեսի գործունեությունը: Այլ կերպ ասած՝ աշակերտները փխրեցնում էին հողը, որպեսզի առաքյալները սերմ դնեին արդեն ծնունդ տալուն պատրաստ հողի և ոչ չորացած ու քարացած հողի մեջ:

3. Հրեական միջավայրում 12-ն առավել կարևոր էր իր բովանդակային և թվային խորհրդաբանությամբ, քան 70/72-ը: Տասներկու թիվը խորհրդանշում է Իսրայելի ժողովրդի տասներկու ցեղերը՝ հրեա ազգի ամբողջականությունը, իսկ 70/72-ն ամփոփում է աշխարհի բոլոր ազգերի բազմազանության խորհուրդը:



Ռաֆայել Սանտի. «Առաջին աշակերտները և ձկնորսության հրաշքը», 1515–1516 թթ.

Ը. Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական աստիճանները և դրանց կապը առաքելահաջորդականության հետ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի նվիրապետական աստիճանների համակարգ՝ սկսած ամենասովորականից. դռնապան, ընթերցող, երդմնեցուցիչ, ջահընկալ, մինչև կիսասարկավագ, սարկավագ, քահանա, և մեծագույնը՝ եպիսկոպոս, կաթողիկոս: Այս աստիճաններն ունենալու համար անհրաժեշտ է ձեռնադրություն, որը սովորաբար կատարում է եպիսկոպոսը՝ որպես առաքելական ավանդության շարունակություն:

Այսինքն՝ եպիսկոպոսը՝ որպես աստիճան, հոգևոր-օրինական տեսանկյունից առաքյալների հաջորդն է՝ այն պարտականությունների կատարողը, որոնք ավանդաբար կապվում են առաքյալների ժառանգությանը՝ մկրտություն, ձեռնադրություն, եկեղեցական օրենսդրություն և այլն:

Թ. Ովքե՞ր կարող են համարվել 72 աշակերտների «հաջորդներ». այսօր առաջարկվող եզրակացություններ

Եթե տեսականորեն դիտարկենք 72 աշակերտներին՝ որպես լայնածավալ միսիոներական առաքելության նախատիպերի, ապա նրանց ժամանակակից հաջորդները կարող են լինել.

1. Այն հոգևորականները, որոնք աստվածապաշտական արարողություններից, եկեղեցական խորհուրդներից, Սուրբ և Անմահ Պատարագից զատ՝ զբաղվում են միսիոներական աշխատանքներով, որոնք կարող են լինել բարեսիրական և բժշկական առաքելություններ, ինչպես նաև բարեգործական ծրագրեր:

2. Դպիրներն ու սարկավագները, որոնք աշխատում են համայնքային միջավայրում՝ չունենալով իրավունք պատարագելու և խորհրդակատար լինելու, բայց իրենց ծառայությամբ օժանդակում են հոգևոր-կրթական առաքելություններին:

3. Կղերիկոսները, որոնք ինչ-որ իմաստով կարող են լինել նաև կին քրիստոնյաներ: Նրանք չունեն հոգևոր որևէ աստիճան, բայց իրենց ծառայությունն են բերում Եկեղեցուն՝ հանուն նրա շենացման և Տիրոջ փառքի:

Այս գիտական առաջարկը հիմնված չէ պատմավավերագրական որևէ փաստի վրա, այլ տրամաբանական մոտեցում է, բովանդակային համադրում՝ ըստ Աստվածաշնչում նկարագրված 70/72-ի առաքելության բնույթի և ժամանակակից եկեղեցական ինստիտուցիոնալ կառուցվածքի:

Ժ. Կանոնական արձագանքներ

Հայ Առաքելական Եկեղեցին, ինչպես ուրիշ ավանդական եկեղեցիներ, հիշատակում է յոթանասուներկու աշակերտների օր: Այդ հիշատակությունը և պատկերավորությունը ցույց են տալիս, որ եկեղեցին ըմբռնում է յոթանասունների կարգը՝ որպես նեղ առաքելական հեղինակության մի մաս: Յոթանասուն(երկու) աշակերտների հարցը հրաշալի կերպով է միավորում բնագրագիտական, տիրույթաբանական և հոգևոր-ազգային, հոգևոր-մշակութային խնդիրները՝ ցույց տալով, թե ինչպես մեկնաբանության մեջ փոքր թվաբանական տարբերությունը կարող է մեզ հասցնել էական պատկերացումների՝ առաքելության, եկեղեցաբանության և առաքելական կատարելության մասին:

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Իսահակ վրդ. Պողոսյան. Խավարում հնչող աղոթքը

Քահանան քայլում էր դանդաղ: Սև պատմուճանը ժամանակ առ ժամանակ խշխշում էր, որպես խավարում ձայն արձակող աղոթք: Ճերմակ մազերն ու խոնարհ պարանոցը պատմում էին ժամանակի մեջ ծայր առած երկխոսության մասին, որը դեռ չավարտված՝ վերափոխվել էր աղոթքի, լռության ու տառապանքի:

Ներս մտնելով՝ կանգ առավ դռան մոտ:

Չորս դատապարտյալները լուռ նստած էին մի կիսաշրջանով, ինչպես մոռացված աստղաբույլը երկնքում: Բայց քահանային տեսնելով՝ փութով վեր կացան:

— Ողջույն, տղերք, ո՞նց եք:

— Ներս եկեք, Տեր հայր: Մենք լավ ենք: Դրսում ի՞նչ կա:

— Նո՛յնը, տղերք, նույնը,— բազմանշանակ դարձավ քահանան:

Երբ կանգնեցին, առաջ անցավ ու կանգնեց ճիշտ նրանց դիմաց, մի պահ ոչինչ չասաց: Բայց նրա լռությունն ավելի հնչեղ էր, քան ցանկացած խոսք:

— Նստե՛ք, Տեր հայր...

— Դե... դո՛ւք էլ նստեք, որ ես ինձ բարեհարմար զգամ:

— Ո՞նց եք, տղերք,— մեկ անգամ էլ անդրադարձավ,— ինչպե՞ս օգտակար լինեմ ձեզ:

— Օրհնեք մեզ ու մեր տունը:

Երբ աղոթքը վերջացրեց, ներկաները շնորհակալություն հայտնեցին, իսկ նրանցից մեկն ասաց.

— Անցյալ օրը Ձեր գիրքը ձեռքեձեռք էր անցնում...

— Հավանեցի՞ք, օգտակա՞ր եղավ,— շշնջաց քահանան:

— Շատ...

— Այդ դեպքում էլի կբերեմ: Ես գրքեր շատ ունեմ, որ ձեզ միայն լավ խորհուրդներ կփոխանցեն: Անդրադարձա՞ք, որ Գողգոթայի բարձունքի մասին խոսելիս ասում եմ՝ այլ բան են տառապանքը, ճշմարտությունն ու լռությունը, այլ բա՝ դատապարտված լինելը և մեղավոր լինելը...

Դատապարտյալներից մեկը՝ թուխ աչքերով մի երիտասարդ, բարձրացրեց գլուխը.

— Մենք սխալվել ենք, Տեր հայր: Բայց եթե ապաշխարանքն իսկապես մաքրում է, ինչո՞ւ ենք դեռ կապանքների մեջ:

Քահանան մի պահ աչքերը փակեց: Այդ պահին արևից պոկված լույսի մի շող պատուհանի ճեղքից ներս էր թափանցել, և քահանան հասցրեց ներշնչվել նրա հաղորդած ջերմությունից:

— Հասկանում եմ, հավատացեք, որ շատ բան հասկանում եմ: Գիտեմ նաև, որ դուք էլ շատ բաների եք լավատեղյակ: Բայց ապաշխարանքը սոսկ խոսք չէ,— ժպիտով ասաց նա,— այլև ճանապարհ դեպի այն լռությունը, որտեղ լիակատար վստահություն կա, մեր կյանքում այնքան պակասող ճշմարտություն, մարդասիրություն և աստվածասիրություն: Մի խոսքով՝ որտեղ Աստված է բնակվում:

Դատապարտյալները վարակվեցին նրա ժպտով ու լավատեսությամբ:

— Գուցե հենց այստեղ էլ մենք պիտի հանդիպենք Նրան, ոչ թե տաճարում,— վրա բերեց մյուսը:

Քահանան բազմանշանակ նայեց, ապա խոնարհեց գլուխը.

— Ինչպես հասկանում եմ, դուք արդեն իսկ գտել եք այն, ինչ փնտրում եք: Եթե մարդ ցանկանում ու մանավանդ հաջողում է տեսնել Աստծուն անգամ այստեղ, ուրեմն տառապանքը պտուղ է տվել, ուրեմն արդեն ազատ է, անհամեմատ ավելի ազատ, քան ազատության մեջ ապրող շատ ուրիշներ: Իսկ տաճարի վերաբերյալ խոսքը փոքր-ինչ երկար է, գուցե մի ուրիշ առիթով զրուցենք: Միայն ասեմ, որ տաճարն իր տեղն ունի, մարդու տաճարը՝ իր տեղը, և կյանքի կոչված ամեն էակ՝ իր տեղը: Բայց մի՛ մոռացեք, որ լռությունը շատ է արժեքավոր, լռությունն Աստծու առաջին լեզուն է, ինչպես որ սերը՝ առաջին պատվիրանը:

Երբ վեր կացավ, բանտախուցը կրկին լցվեց լռությամբ: Սակայն այդ լռությունն արդեն այլ էր, բոլորովին այլ, որ հաճախ տաճարներում է հանդիպում լուռ աղոթքի պահերին...

Օրը տարաժամել էր: Քահանան վերադառնում էր խաղաղ, դանդաղ քայլերով: Երկինքն ասես ցածր էր իջել՝ մուգ կապույտի ու մոխրի թախծոտ երանգներով: Քամին հանդարտ հոտոտում էր նրա պատմուճանը՝ կարծես փորձելով կլանել խունկի և աղոթքի բույրը: Քարե պատերի ներսում նա թողել էր մի թևածող լույս, որ միայն ներքուստ էր երևում...

Աստվածատուր Ա Համադանցի՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց

➥ էջ 7

Մինչև օրս Մայր Տաճարի աջակողմյան դասում դրված հայրապետական գահավորակի վրա կա միատող արձանագրություն, որտեղ հիշատակվում է Աստվածատուր Կաթողիկոսի անունը: Այն, ըստ արձանագրության, պատրաստվել է 1721 թվականին՝ ի հիշատակ «Ակնցի մահտեսի Մինասի որդի Սեղբոսին և կամրկապցի Նազարի որդոյ՝ մահտեսի Առաքելին, Մարտիրոսին և Յարութիւնին և ամենայն զարմիցն նոցին»: Նաև հիշատակվում է, որ պատրաստվել է Տեր Հովհաննես և Տեր Պետրոս վարդապետների հոգաբարձությամբ (տե՛ս Արսեն Հարությունյան, Վաղարշապատ, էջ 65–66): Հետագայում՝ 1967 թվականին, Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետության տարիներին, նորոգվել է, ինչի մասին վկայում է գահավորակի հարավային կողմում առկա արձանագրությունը:

Հայոց Հայրապետի կարևոր ձեռնարկներից էր հատուկ դիմումը՝ ուղղված պարսից շահին՝ վերացնելու պարսկական պետության սահմաններում գործող խտրական իրավունքը, որից օգտվում էին մահմեդականություն ընդունած հայերը: Ըստ այդ իրավունքի՝ քրիստոնյա ընտանիքի մի անդամը, մահմեդականություն ընդունելով, դառնում էր այդ ընտանիքի միակ ժառանգորդը: 1724 թ. Թահմազ շահը, ի պատասխան նրա խնդրանքին, հատուկ հրովարտակ է հրապարակում, համաձայն որի՝ մահմեդականություն ընդունած հայն այլևս չէր կարող հավակնել իր քրիստոնյա հարազատների ժառանգությանը (տե՛ս Հակոբ Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Բ, Երևան, 1976, սյունակ 676): Վերացրել է նաև գլխահարկի հավելումները, որից հետո նա երկիր վերադառնալու կոչ է ուղղել խտրականության հետևանքով ուրիշ երկրներում հաստատված արևելահայ վաճառականներին:

Աստվածատուր Ա Համադանցու անվան հետ է կապված Հավուց թառ վանքի՝ 1679 թ. երկրաշարժից ավերված եկեղեցու հետագա ճակատագիրը: 1721 թ. ավերված հին եկեղեցու և գավիթի քարերով նրա նախաձեռնությամբ նույն տեղում մի նոր եկեղեցի է կառուցվել: Սակայն լեզգիների (կովկասյան լեռնականներ) արշավանքի հետևանքով եկեղեցու կառուցումը մնում է անավարտ: Քանի որ նրա նախաձեռնությամբ էին սկսվել եկեղեցու շինարարական աշխատանքները և անավարտ մնացել, եկեղեցին այդպես էլ չի անվանակոչվել, ուստի գրականության մեջ սովորաբար այն կոչվում է Աստվածատուր Համադանցու եկեղեցի (տե՛ս Կարեն Մաթևոսյան, Հացուց թառի վանքը, Երևան, 2021, էջ 45):

Աստվածատուր Համադանցին թողել է նաև մատենագրական ժառանգություն: Պահպանվել են մի քանի երկեր, որոնք մատենագրական վկայությունների քաղվածքներ են, ինչպես նաև կոնդակներ:

Աստվածատուր Կաթողիկոսին վիճակված չէր երկար բազմել Հայոց հայրապետական սրբազան գահին: Հայոց Հայրապետը վախճանվեց 1725 թ. հոկտեմբերի 10-ին Օշականում: Լուսնի խավարումը դիտելու ժամանակ հանկարծ տանիքից գլխիվայր ընկնում է՝ գլխի ծանր վնասվածք ստանալով, և չորս ժամ անց մահանում: Կաթողիկոսին հողին են հանձնում Վաղարշապատի Սուրբ Հռիփսիմե վանքի գավթում:

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 5.11.2025 թ.
Տպաքանակը՝ 1265